ԵՐԵՎԱՆԻ
ՊԵՏԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

2024-2025

ՈՒՍՏԱՐՎԱ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Բովանդակություն

1

Նախաբան 3

Ռազմավարական նպատակ 1 - Կրթության բովանդակության ու մեթոդաբանության արդիականացում 9

Ռազմավարական նպատակ 2 - Գիտահետազոտական արդյունքի բարելավում 22

Ռազմավարական նպատակ 3 - Միջավայրի և ենթակառուցվածքների համապատասխանեցում համալսարանական շահառու բոլոր խմբերի պահանջներին 34

Ռազմավարական նպատակ 4 - Մարդկային ռեսուրսի զարգացում և համալրում 41

Ռազմավարական նպատակ 5 - Կառավարման համակարգի արդիականացում, որոշումների կայացման և իրագործման արդյունավետության բարձրացում 48

Ռազմավարական նպատակ 6 - Արտաքին միջավայրի հետ ինտեգրում և ներդաշնակեցում 54

Հետագա անելիքներ, առաջնահերթություններ և մարտահրավերներ 66

Նախաբան

Զարգացման 2025–2030 թթ. ռազմավարության ընդունմամբ ԵՊՀ-ն տարին մեկնարկեց հստակ սահմանված ռազմավարական նոր թիրախներով և ուղենիշներով: Այս մեկնարկային ընթացքը հատկապես կարևորվում էր այն հանգամանքով, որ հստակեցված և վերաիմաստավորված նպատակների համատեքստում համալսարանի ու համալսարանականների կողմից գործադրված ջանքերն իրականացվում էին նոր համակարգային փոփոխությունների հեռանկարների ընկալմամբ:

Ռազմավարության իրականացման մեկնարկային տարում ԵՊՀ-ն իր ռազմավարական վեց նպատակների շրջանակում կենտրոնացել էր այն առաջնահերթ խնդիրների վրա, որոնք կոչված են ձևավորելու այն ներուժը, որն անհրաժեշտ է համալսարանի կայուն, հետևողական և երկարաժամկետ վերափոխման ու զարգացման ապահովման համար: Միաժամանակ, նախորդ տարիներին մեկնարկած գործընթացները, շարունակվելով և արձանագրելով լրացուցիչ արդյունքներ, նպաստում են լրացուցիչ կազմակերպական, մարդկային և ինստիտուցիոնալ ռեսուրսների գեներացմանը՝ ընդլայնելով համալսարանի առաջընթացի և զարգացման հնարավորությունները:

Հաշվետու տարում ԵՊՀ-ն լուրջ քայլեր ձեռնարկեց կրթական գործընթացի վերակազմակերպման և համակարգային փոփոխությունների իրականացման տեսանկյունից: Այս գործընթացն առաջին հերթին վերաբերում է երկու կարևորագույն ուղղությունների՝ դասախոսական կազմի զարգացմանն ու համալրմանը և կրթական ծրագրերի համապատասխանեցմանը արդի աշխարհի և տնտեսության պայմաններին:

Կրթական գործընթացում ուսանողների համար հավելյալ ինքնուրույն վերլուծական աշխատանք կատարելու հնարավորությունների ստեղծումը նախևառաջ պետք է նախանշվի ծրագրի կառուցվածքում և ամրագրվի դրա բովանդակությամբ, իսկ դասախոսների և հատկապես կրթական ծրագրերի ղեկավարների կարողություններն այդ փոփոխություններն իրականություն դարձնելու գործում սկզբունքային նշանակություն ունեն: Այս համատեքստում հաշվետու ժամանակաշրջանում բարեփոխվեցին և գործարկվեցին համալսարանական մի շարք կարգեր, որոնք վերաբերում են դասախոսական կազմի համալրմանը, դասախոսների վերապատրաստմանն ու ատեստավորմանը: Զուգահեռաբար, դասախոսների վերապատրաստման գործընթացը գնալով ավելի համակարգված և ակտիվ բնույթ է ստանում՝ հիմնված վերջիններիս կարիքների վրա: Այս տեսանկյունից կարևոր են ինչպես դասախոսների իրազեկվածությունը կրթական գործընթացում տեղի ունեցող փոփոխությունների վերաբերյալ, այնպես էլ ժամանակակից մեթոդաբանական և տեխնոլոգիական լուծումներից օգտվելու կարողությունը: Հատկանշական է, որ իրականացված վերապատրաստումների զգալի մասը նպատակաուղղված էր հենց այդ կարողությունների ձևավորմանն ու ամրապնդմանը: Դասախոսական կազմի

կարողությունների զարգացման կարևոր ուղղություններից մեկը միջազգային համագործակցության շրջանակում տարբեր համալսարանների փորձառու գործընկերների հետ փոխգործակցությունն է և նրանց ինտեգրումը կրթական գործընթացում: Այս գործընթացը, որն ակտիվորեն խրախուսվում է բուհի կողմից, բազմաթիվ նոր հնարավորություններ է ստեղծում ԵՊՀ դասախոսների համար՝ վերլուծելու սեփական աշխատանքն ու բարելավելու այն՝ արտաքին մասնագիտական դիտարկման վրա հիմնված ինքնահայեցման մեխանիզմների կիրառմամբ:

Կրթական գործընթացի վերահմաստավորման և վերակազմակերպման գործընթացները կարևոր են նաև «Բարձրագույն կրթության և գիտության մասին» նոր օրենքի համատեքստում, քանի որ վերջինս սկզբունքորեն նոր պայմաններ է սահմանում կրթական գործընթացի կազմակերպման համար և, ըստ էության, պարտադրում բուհերին գնալ համակարգային փոփոխությունների: ԵՊՀ-ն, մասնակից լինելով օրենքի նախագծի քննարկումներին և տեղյակ լինելով սպասվող փոփոխություններին, նախապես ձեռնարկել ու իրականացրել է մի շարք կարևոր քայլեր, որոնք ավելի դյուրին և սահուն կդարձնեն օրենքով պայմանավորված փոփոխությունների ընթացքը:

Կրթական ծրագրերի փոփոխության, նոր հնարավորությունների ստեղծման և համալսարանում համակողմանի գործընթացների համատեքստում կարևոր է նաև դիմորդների հետ տարվող աշխատանքը: Այս ուղղությամբ իրականացվող գործընթացները պահանջում են սկզբունքորեն նոր մոտեցումներ, ինչի գիտակցմամբ ԵՊՀ-ն ավելի մասնակցային է դարձրել մասնագիտական կողմնորոշման գործընթացը ինչպես այցելությունների, մասնագիտական կողմնորոշման ճամբարների և օլիմպիադաների, այնպես էլ տարատեսակ էքսպոների ընթացքում՝ առաջարկելով դիմորդներին հանդես գալ ոչ թե որպես դիտորդ, այլ որպես մասնակից և զգալ մասնագիտության հնարավորությունները գործնական մակարդակում:

Գիտահետազոտական ուղղության առանցքային ձեռքբերումները հաշվետու տարում արտահայտվում են համալսարանականների կողմից հեղինակավոր միջազգային պարբերականներում հրապարակված գիտական հոդվածների զգալի աճով: Այս դինամիկան պայմանավորված է ոչ միայն պետության և համալսարանի կողմից ներդրված խթանող ֆինանսական և ինստիտուցիոնալ մեխանիզմների գործարկմամբ, այլև գիտահետազոտական ծրագրերի իրականացման էական ինտենսիվացմամբ, ինչպես նաև համալսարանականների ակտիվ ներգրավմամբ միջազգային գիտական հարթակներում:

Վերջին տարիներին կատարված գործողությունների արդյունքում համալսարանում նկատվում է գիտահետազոտական գործընթացների ակտիվացում, որն արդեն իսկ հանգեցնում է տեսանելի որակական փոփոխությունների: Թեև գիտության ոլորտում նման փոփոխությունները բնույթով ժամանակատար և ռեսուրսատար են, բայց և այնպես ընթացիկ տարին հնարավոր է դիտարկել որպես գիտության ֆինանսավորման շեշտակի աճի տրամաբանության անցում կարճաժամկետ փուլից

միջնաժամկետ կայունացման փուլ, ինչով էլ կարելի է հիմնավորել գիտական հոդվածների քանակական ցուցանիշների գրեթե կրկնապատկումը։

Գիտական և կրթական ծավալուն բովանդակության հասանելիությունը համալսարանականներին ևս մի կարևոր գործոն է, որը նպաստում է մտավոր գործընթացի համար անհրաժեշտ միջավայրի զարգացմանը։ Այս տեսանկյունից չափազանց կարևոր է բազմաթիվ թվային շտեմարանների հասանելիության ապահովումը համալսարանականների համար, ինչպես նաև նոր հետազոտական սարքավորումների և տեխնիկական միջոցների ապահովումը հետազոտական միջավայրում։

Մեկ այլ կարևոր գործոն, որն էական ազդեցություն ունի գիտահետազոտական գործընթացի զարգացման վրա, հետազոտական արտադրանքի անմիջական սպառողների հետ կապի ամրապնդումն է։ Այս համատեքստում նշանակալի է հետազոտական պատվերի և փորձագիտական ծառայությունների մատուցման նպատակով համագործակցությունը պետական և մասնավոր ոլորտների հետ։ Հաշվետու ժամանակահատվածում նկատվում է տարբեր ոլորտների տնտեսվարողների կողմից հետաքրքրության աճ համալսարանում իրականացվող և առաջարկվող հնարավորությունների հանդեպ, իսկ պետական կառավարման համակարգի կողմից՝ առավել համակարգված փոխգործակցություն բուհի հետ՝ ուղղված գիտելիքահենք քաղաքականությունների մշակմանը և համալսարանական փորձագիտական ներուժի ներգրավմանը։

Կրթական և գիտահետազոտական արդյունավետ գործունեության իրականացման համար համալսարանական ենթակառուցվածքների և ընդհանուր միջավայրի բարելավումն անկյունաքարային նշանակություն ունի։ Այս տեսանկյունից հաշվետու տարին նշանակալի է երեք հիմնական զարգացումներով՝ վերանորոգման ու կահավորման նոր չափանիշների մշակում ու ներդրում, համալսարանի կողմից պլանավորված և դրան համապատասխան բարեկարգման ծրագրերի իրականացում և գործընկերների հետ համագործակցություն, ինչպես նաև հավելյալ ծրագրերի իրականացմամբ միջավայրի բարելավում։ Այս համալիր գործողությունների արդյունքում համալսարանն ավելի գրավիչ է դառնում որպես կրթական ու աշխատանքային էկոհամակարգ, իսկ ժամանակակից աշխարհի պահանջներին համապատասխան չափանիշների կիրառումն ապահովում է այդ էկոհամակարգի ներառականությունը, անվտանգությունը, անհրաժեշտ թվային լուծումներն ու պայմանների ստեղծումը՝ ուղղված թվային վերափոխման և «կանաչ» համալսարանի հայեցակարգի համար անհրաժեշտ նախադրյալների ստեղծմանը։

Սահմանելով մարդկային կապիտալի զարգացումը որպես փոփոխության տեսության մեկնարկային կետ՝ ԵՊՀ-ն իր նոր ռազմավարության իրականացման մեկնարկին նշանակալի աշխատանք է կատարել դասախոսական, հետազոտական, վարչական և ուսումնաօժանդակ անձնակազմի կարողությունների զարգացման ուղղությամբ։ Այս նպատակին են ծառայել ինչպես համալսարանում և համալսարանականների

ռեսուրսներով կազմակերպված վերապատրաստումներն ու աշխատարանները, այնպես էլ համագործակցային եղանակով իրականացված վերապատրաստման ծրագրերը, որոնք հատկապես կարևոր են արտաքին փորձառությանը ծանոթանալու և համալսարանի կարիքներին համապատասխան այն ադապտացնելու տեսանկյունից: Միևնույն ժամանակ, այս ուղղությամբ կատարվել են համակարգային փոփոխություններին ուղղված քայլեր՝ միտված նոր աշխատակիցների ինտեգրումն ավելի սահուն դարձնելուն, համալսարանական աշխատակազմի կարողությունները գնահատելուն և դրա հիման վրա թիրախային վերապատրաստումներ ու կարողությունների զարգացմանն ուղղված այլ միջոցառումներ կազմակերպելուն: Հարկ է նշել նաև, որ համալսարանի կողմից իրականացվող բազմաթիվ գործողություններ, որոնց առաջնային նպատակը մարդկային ռեսուրսի զարգացումը չէ, ինչպես, օրինակ, միջազգային համագործակցության ծրագրերը, մասնավոր և պետական ոլորտների հետ համագործակցությունը, իրենց տեսանելի ազդեցությունն են ունենում նաև համալսարանականների կարողությունների զարգացման վրա:

Ցանկացած հաստատության համար ամենաբարդ մարտահրավերներից մեկը թերևս գործող օպերացիոն միջավայրում կառավարման գործիքակազմի, որոշումների կայացման և իրագործման մեխանիզմների, ինչպես նաև դրանց արդյունքների գնահատման համակարգերի վերափոխման գործընթացն է: Համալսարանի պարագայում այն վերաբերում է տեխնիկական գործիքակազմի՝ կառավարման համար անհրաժեշտ թվային համակարգերի արդիականացմանը, կառուցվածքային բարեփոխումների կազմակերպմանը, նոր կանոնակարգերի մշակմանը, հաստատմանն ու գործարկմանը: Այս համատեքստում հաշվետու ժամանակահատվածը կարելի է բնութագրել որպես ակտիվ նախապատրաստական փուլ, քանի որ ներհամալսարանական մակարդակում իրականացվում են նոր գործիքների և նորմերի համակարգված քննարկումներ, դրանց տեղային և պիլոտային փորձարկումներ, իսկ որոշ դեպքերում, ինչպես, օրինակ, թվային կառավարման լուծումների պարագայում, նաև գործնական փոփոխությունների իրականացում:

Այս գործընթացում կարևոր են նաև ներքին և արտաքին գնահատման համակարգերի կիրառումը, պլանավորման գործիքակազմի և մասնակցային պլանավորման մշակույթի զարգացումը, ինչը հաշվետու տարում իրականացվեց պլանավորման նոր կարգի մշակմամբ, գործողությունների ծրագրի պարբերական մշտադիտարկման նոր գործիքակազմի կիրառմամբ և պլանավորման պատասխանատուների վերապատրաստումներով: Կարևոր են նաև ֆինանսական վերլուծությունների և պլանավորման ուղղությամբ, ինչպես նաև գնումների կազմակերպման և անհրաժեշտ միջոցների մատակարարման ոլորտներում համալսարանի կողմից կատարված գործողությունները, որոնց շնորհիվ համալսարանում գործընթացների կազմակերպման և ռեսուրսների բաշխման տեմպն ու արդյունավետությունը տեսանելի առաջընթաց են արձանագրել:

Հաշվետու տարվա ընթացքում համալսարանը մի շարք կարևոր ծրագրեր ու միջոցառումներ է իրականացրել ներքին և արտաքին հաղորդակցության և

համագործակցության գործընթացների բարելավման տեսանկյունից։ Ներհամալսարանական հաղորդակցական միջավայրի բարելավմանն ուղղված ինչպես կազմակերպական, այնպես էլ կորպորատիվ մշակույթի զարգացմանն ուղղված մի շարք ծրագրեր ու գործողություններ հնարավորություն են ստեղծել բարձրացնելու միջանձնային հաղորդակցության և ստորաբաժանումների միջև համագործակցության որակը։ Համալսարանի կողմից կորպորատիվ պատասխանատվության տարբեր ծրագրեր կոչված են ապահովելու համալսարանականների բարեկեցության բարձրացումը և հասցեագրելու խոցելի խմբերի կարիքները։

Արտաքին հաղորդակցության տեսանկյունից նշանակալից է շրջանավարտների համայնքը համալսարանի շուրջ համախմբելուն ուղղված ջանքերն առաջին անգամ կազմակերպված շրջանավարտների ֆորումի, «ԵՊՀ բարեկամներ» հիմնադրամի և թիրախային այլ ծրագրերի միջոցով։ Նշանակալից է նաև միջազգային և տեղական գործընկերների հետ համագործակցությունը կրթական և փորձագիտական ծրագրերի համատեքստում։ Հաշվետու տարում համալսարանն ամրապնդել է իր դերը որպես առանցքային նշանակություն ունեցող իրադարձությունների կարևոր հանգույց՝ հյուրընկալելով և համակազմակերպելով միջազգային և տեղական բազմաթիվ գործընկերների նախաձեռնություններ և միջոցառումներ։

Ստորև ամփոփված են հաշվետու տարվա արդյունքներն ու ձեռքբերումները՝ ներկայացված թվային ցուցանիշներով և առանցքային իրադարձություններով՝

- ✓ 3437 դիմորդ
- ✓ 2414 ընդունվածներ (անվճար՝ 485, վճարովի՝ 1929)
- ✓ 3060 շրջանավարտ
- ✓ 175 կրթական ծրագրի բարելավում և արդիականացում
- ✓ 12 նոր մագիստրոսական ծրագրի լիցենզավորում
- ✓ 33 հրավիրյալ պրոֆեսորի ներգրավում ուսումնական գործընթացում
- ✓ 5 հեռուսուցման դասընթացի մշակում
- ✓ 98 ճանաչողական այցի կազմակերպում՝ 6.249 աշակերտի մասնակցությամբ
- ✓ ԵՊՀ օլիմպիադա-2025-ի անցկացում՝ 1.131 մասնակցով
- ✓ 65 դիպլոմակիրի պարգևատրում 30-50% զեղչերով
- ✓ 17 նոր պայմանագրի ստորագրում արտասահմանյան բուհերի հետ
- ✓ «Միջազգային և գործարար հաղորդակցություն» կրկնակի դիպլոմով ծրագրի մեկնարկ
- ✓ 92 օտարերկրյա դասախոսի ներգրավում
- ✓ 27 մենագրություն
- ✓ 245 գիտաժողովի նյութ
- ✓ 1225 հոդված
- ✓ 5 արտոնագիր
- ✓ 78 ճանապարհորդական դրամաշնորհ
- ✓ 88 ֆինանսավորված նախագիծ ԲԿԳԿ-ի կողմից

- ✓ 9 գիտական միջոցառում և 2 երիտասարդ գիտնականների դպրոց ԲԿԳԿ-ի հետ համատեղ
- ✓ 1.075.814.156 ՀՀ դրամին համարժեք 10 սարք ԲԿԳԿ-ի կողմից
- ✓ 5.636.351 ՀՀ դրամին համարժեք 23 սարք «Fast Advance»-ի շրջանակում
- ✓ 10 հոսքային և 5 քննական լսարանի վերանորոգում
- ✓ 6 լաբորատորիայի կահավորում Քիմիայի ու Կենսաբանության ֆակուլտետներում և Ֆիզիկայի ինստիտուտում
- ✓ 250+ Wi-Fi 5 սարքի տեղադրում
- ✓ 301 տեղեկատվական ցուցանակի տեղադրում
- ✓ Նոր միջցանցային անվտանգության համակարգի ներդրում
- ✓ 5.100 մետր նոր ցանցային ենթակառուցվածքի անցկացում
- ✓ Հակահրդեհային համակարգերի ամբողջական արդիականացում
- ✓ Թվային էկրանների համար բովանդակության պատրաստում
- ✓ SOS արագ արձագանքման համակարգի գործարկում
- ✓ 183 դասախոսի և 191 վարչական աշխատակցի վերապատրաստում
- ✓ Կարիքահենք մոտեցմամբ մասնագիտական կարողությունների գնահատում
- ✓ Նոր աշխատակիցների ինտեգրման (onboarding) ընթացակարգերի ներդրում
- ✓ 900+ մասնակցով բազմաբնույթ կրթական ծրագրեր
- ✓ 16 դասընթաց 292 պետական ծառայողների համար
- ✓ 20 ուսանողի մասնակցություն միջազգային լրացուցիչ կրթական ծրագրերում
- ✓ 120 նոր պայմանագրի կնքում պրակտիկայի կազմակերպման համար
- ✓ 3.503 ուսանողի մասնակցություն մասնագիտական պրակտիկայի
- ✓ Կայքի 943.000 նոր այցելություն, Facebook: 80.000 հետևորդ (+3,800 նոր), 1.397.322 ընդգրկվածություն, 822.000 այցելու, Instagram: 5.418 հետևորդ (+2,000 նոր), LinkedIn: 40.455 հետևորդ (+4.400 նոր), YouTube: 5.036 հետևորդ (+437 նոր), 74.100 դիտում,
- ✓ Ժողովրդագրական հետազոտությունների կենտրոնի ստեղծում
- ✓ Հնարավորությունների տոնավաճառ
- ✓ Շրջանավարտների ֆորում-2025
- ✓ Գիտության շաբաթ-2024

Ռազմավարական նպատակ 1 - Կրթության բովանդակության ու մեթոդաբանության արդիականացում

Երևանի պետական համալսարանի ռազմավարության առաջին ուղղությունը կրթության բովանդակության և մեթոդաբանության արդիականացումն է՝ ի պատասխան գիտելիքահենք տնտեսության և բարձրագույն կրթության գլոբալ միջավայրի զարգացող պահանջներին: Ժամանակակից ակադեմիական համակարգերում կրթության որակի ապահովումն ու շարունակական բարելավումն ընկալվում են ոչ միայն որպես առանձին ծրագրերի կամ վարչական գործընթացների կատարելագործում, այլև որպես ամբողջական կրթական էկոհամակարգի վերանայման ու վերաձևավորման մեխանիզմ: Այդ համատեքստում ԵՊՀ-ն իրականացնում է դիմորդների գիտակցված ընտրությունը խթանող ծրագրեր, ուսումնառության արդյունքահենք կազմակերպում, կրթության միջազգային մրցունակության բարձրացում և աշխատաշուկայի հետ համադրված ճկուն ուսուցման ձևաչափերի ընդլայնում:

Հիմք ընդունելով կառավարման արդյունավետության ապահովման անհրաժեշտությունը՝ ստորև նկարագրված բոլոր գործողությունները կատարվել են ՊԻԳԲ՝ *պլանավորում, իրականացում, գնահատում, բարելավում* շրջափուլին համապատասխան: Նշված շրջափուլի տրամաբանությամբ են պայմանավորված վերջին տարիներին ԵՊՀ-ում իրականացվող պիլոտային տարբեր ծրագրերը, որոնք պլանավորման փուլից մինչև բարելավման փուլը անցնում են մի շարք մշտադիտարկման գործընթացների միջով և միայն հետո ներդրվում կամ չեն

ներդրվում ուսումնական գործընթացում: Առաջին դեպքում կազմակերպվում են վերապատրաստումներ և/կամ տրամադրվում են խորհրդատվություններ՝ վերոհիշյալ գործողությունների իրականացման և ընթացակարգային կարգավորումների վերաբերյալ անձնակազմի մոտ անհրաժեշտ կարողությունները ձևավորելու համար:

Կրթության որակի գնահատման և արդյունքահենք ուսուցման ներդրումը կարևոր նշանակություն ունի ծրագրերի արդիականացման և առաջընթացի ապահովման գործում: Համալսարանը նպատակ ունի սահմանելու գնահատման վերջնարդյունքների միասնական մոտեցումներ, կատարելագործելու կրեդիտների ճանաչման կարգավորումները և մշակելու ուսանողի ինքնուրույն աշխատանքի չափելիության ու արդյունավետության գնահատման մեխանիզմներ, որոնք կապահովեն ինչպես ներքին, այնպես էլ արտաքին թափանցիկություն և համադրելիություն:

Կրթության միջազգայնացումը դիտարկվում է որպես ԵՊՀ մրցունակության բարձրացման առաջնահերթ ուղղություն: Համալսարանը շարունակում է զարգացնել կրկնակի և համատեղ դիպլոմով կրթական ծրագրերը, ստեղծել հրավիրյալ պրոֆեսորների ներգրավման հարթակներ, ապահովել կրթական ծրագրերի միջազգային հավատարմագրում և ընդլայնել ինչպես օտարերկրյա ուսանողների ներգրավման, այնպես էլ ուսանողական շարժունության շրջանակը: Այս քայլերը միտված են ոչ միայն միջազգային ներկայության ամրապնդմանը, այլև կրթության արդիականացմանը և բազմամշակութային ակադեմիական միջավայրի զարգացմանը:

Աշխատաշուկայի արդի պահանջներին համապատասխան կրթական ծրագրերի մշակումն ու դրանց իրականացման համար անհրաժեշտ ճկուն ուսուցման ձևաչափերի ներդրումը դիտվում են որպես համալսարանի կրթական համակարգի

շարունակական և գործնական բարելավման հիմնական ուղղություններ: Աշխատաշուկայի հետ համագործակցությամբ իրականացվող պահանջների վերլուծությունն ու դրանց հիման վրա մշակվող թիրախային և միկրոորակավորման ծրագրերը կնպաստեն ԵՊՀ կրթական առաջարկի ավելի ճկուն ու մատչելի դառնալուն՝ ապահովելով ինչպես ավանդական, այնպես էլ նոր ձևաչափով ուսուցման պահանջ ունեցող լսարանների լայն ընդգրկում:

Հաշվետու տարում շարունակվել է դիմորդների հետ տարվող համակարգային աշխատանքը, որն ուղղված է մասնագիտական կողմնորոշմանն աջակցելուն, համալսարանի կրթական ծրագրերի բազմաբնույթ ներկայացմանը և բարձր ներուժ ունեցող դիմորդների նպատակային ներգրավմանը: Տարվա ընթացքում Երևանի և ՀՀ մարզերի դպրոցներից կազմակերպվել է **98 ճանաչողական այց**, որոնցում ընդգրկվել է **6249 աշակերտ** և **203 ուսուցիչ**. այդ այցելություններից **515 աշակերտ մասնակցել է լաբորատոր այցելություններին**, ինչը հնարավորություն է տվել ներկայացնելու ԵՊՀ գիտահետազոտական ենթակառուցվածքները: 2024–2025 ուստարում ներդրվել է **այցերի առցանց գրանցման հարթակ**, որը հնարավորություն է տվել ձևավորելու տվյալների թվայնացման, հետադարձ կապի և պոտենցիալ դիմորդների բազա:

Բարձր ակադեմիական առաջադիմություն ունեցող դիմորդների ներգրավման նպատակով անցկացվել է «**ԵՊՀ աշակերտական օլիմպիադա-2025**»-ը, որի I փուլին մասնակցել է **1131 աշակերտ**, II փուլին՝ **519**: Մրցանակային արդյունք է գրանցել **100 աշակերտ**, որոնցից **65-ը** պարգևատրվել է դիպլոմներով՝ ստանալով ուսման վարձի **30–50% զեղչի իրավունք**: Նրանցից **9** օգտվել է զեղչերից: Բացի դրանից՝ կազմակերպվել են առարկայական մրցույթներ «Պետության և իրավունքի հիմունքներ» և «Տրամաբանություն» առարկաներից, որոնց մրցանակակիրների **63 %-ը** դիմել է ԵՊՀ:

Անցկացվել են նաև թեմատիկ դպրոցներ՝ «ԵՊՀ տնտեսագիտական դպրոց» (1167 մասնակից), «Ամառային դպրոց» (Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետ, 34 մասնակից) և «Աշնանային մեդիադպրոց» (Ժուռնալիստիկայի ֆակուլտետ, 50 մասնակից)։ Շարունակական կրթության կենտրոնը կազմակերպել է բնագիտական ամառային աշխատարան ԵՊՀ-ում՝ 14 դպրոցականների մասնակցությամբ, ինչպես նաև «Հայաստան» համահայկական հիմնադրամի աջակցությամբ՝ բնագիտական ամառային ճամբար Ծաղկաձորում, որին մասնակցել են ավելի քան 60 Արցախից բռնի տեղահանված և հայաստանցի դպրոցականներ։ Ավագ դպրոցի աշակերտների համար Դիմորդների հետ տարվող աշխատանքների բաժնի և Ընդհանուր հոգեբանության ամբիոնի հետ համատեղ մշակվում է հոգեբանական փաթեթ, որը մասնագիտական կողմնորոշումը գնահատելու պահանջված տարբերակներից է։

ԵՊՀ նախապատրաստական դասընթացներին դիմել է **65 տեղացի** և **10 օտարերկրյա** ուսանող (Չինաստան, Իրան, Ֆրանսիա, Չեխիա, Վրաստան), ձևավորվել է **21 առարկայական խումբ, ներգրավվել է 17 դասախոս։**

ԵՊՀ-ում շարունակվել է կրթական վերջնարդյունքների հստակեցման, ուսանողի ինքնուրույն աշխատանքի գնահատման և կրեդիտների ճանաչման կարգերի կատարելագործման գործընթացը։

Կրթական ծրագրերի բարձր արդյունավետությունը ապահովելու նպատակով շարունակվել են աշխատանքի վրա հիմնված և արդյունքահենք մոտեցումների ներդրման աշխատանքները։ Մասնավորապես, վերանայվել են ուսումնական պլանները և վերջնարդյունքները՝ համադրելի դարձնելով դրանք եվրոպական կրեդիտային համակարգին (ECTS), մշակվել են ինքնուրույն աշխատանքի գնահատման միասնական մեխանիզմներ, պարզեցվել են կրեդիտների ճանաչման կարգերը, առանձնահատուկ կարևորվել են խառը ուսուցման, գնահատման և կրթության մեջ թվային գործիքների կիրառման վերլուծությունն ու ընդլայնումը։ Այս գործընթացները համընկնում են միջազգային գործընկերների հետ համագործակցության հիման վրա մշակվող ծրագրերի պահանջների հետ՝ նպաստելով կրթական բովանդակության համաչափ արդիականացմանը։

Լրամշակվել և բարելավվել են բակալավրի և մագիստրոսական 175 կրթական ծրագրեր։ Իրականացվել են 6 մագիստրոսական կրթական ծրագրերի վերալիցենզավորում (վերանայվել են կրթական ծրագրերի ուսման տևողությունը և բովանդակությունը), 12 նոր մագիստրոսական կրթական ծրագրերի (ՄԿԾ) լիցենզավորում։

Բակալավրի կրթական ծրագրերի բարելավման դրամաշնորհի շրջանակում 2024 թվականին ֆինանսավորում է ստացել բակալավրի 3 կրթական ծրագիր, իսկ 2025 թվականին՝ 4։ Ֆինանսավորման արդյունքում հրավիրյալ պրոֆեսորների

մասնակցությամբ 3 կրթական ծրագրերում վերանայվել են դասընթացների (յուրաքանչյուր կրթական ծրագրում՝ առնվազն 5) նկարագրիչները և պլանները, բարելավվել դասընթացների բովանդակությունը: 4 կրթական ծրագրի բարելավման գործընթացն ընթացքի մեջ է:

ՄԿԾ իրականացման գործունեության առանցքային ցուցանիշների գնահատման արդյունքում ԵՊՀ-ում գործող 9 ՄԿԾ ստացել է լրացուցիչ ֆինանսավորում՝ ծրագրի զարգացման համար:

ԵՊՀ-ում ներքին դրամաշնորհների շրջանակում ուսումնական գործընթացում ներգրավված է եղել 15 հրավիրյալ պրոֆեսոր, որոնք դասավանդել են գործող ԿԾ-ի առնվազն մեկ դասընթաց, ինչպես նաև ընդգրկված են եղել ԿԾ բարելավման աշխատանքներում: Դասավանդումն իրականացվել է հիմնականում համադասավանդման ձևաչափով՝ նպատակ ունենալով հաղթահարելու լեզվական դժվարությունները և ապահովելու դասավանդման մեթոդաբանական փորձի փոխանակում ԵՊՀ մասնագետների հետ: Կրթական գործընթացում ներգրավված և առնվազն մեկ դասընթաց դասավանդող հրավիրյալ պրոֆեսորների թիվը 2024-2025 ուսումնական տարում եղել է **33**:

Հաշվետու ուստարում մշակվել է 5 հեռուսուցման դասընթաց, որոնցից այս պահին ուսանողներին հասանելի են երեքը՝ «Հոգեբանության հիմունքներ», «Հետազոտության պլանավորում և մեթոդներ», «Քաղաքացիական պաշտպանություն և արտակարգ իրավիճակներում բնակչության առաջին բուժօգնություն»:

2024-2025 ուսումնական տարվա 1-ին կիսամյակում արտաքին ֆինանսավորմամբ 12 անվանական կրթաթոշակ է

հատկացվել տարբեր ուսումնական ստորաբաժանումների 18 թեկնածուների, որոնցից 12-ը եղել են նոր թեկնածուներ՝ առաջադրված ուսումնական ստորաբաժանումների կողմից: Ներքին ֆինանսավորմամբ 47 անվանական կրթաթոշակ է հատկացվել 50 ուսանողի, որոնցից 33-ը դարձյալ եղել են նոր թեկնածուներ: 2-րդ կիսամյակում արտաքին ֆինանսավորմամբ 12 անվանական կրթաթոշակ է հատկացվել 18 ուսանողի, որոնցից 3-ը՝ նոր առաջադրված թեկնածուների: 2-րդ կիսամյակում ներքին ֆինանսավորմամբ 47 անվանական կրթաթոշակ է հատկացվել 50 ուսանողի, որոնցից 15-ը՝ դարձյալ նոր թեկնածուների:

Միջմասնագիտական թեզի կատարման համար տրամադրվել է 3 կրթաթոշակ Ժուռնալիստիկայի, Սոցիոլոգիայի, Փիլիսոփայության և հոգեբանության ու Մաթեմատիկայի և մեխանիկայի ֆակուլտետների ուսանողներին: Ընդհանուր առմամբ, 6 ուսանողի կողմից պատրաստվել է միջմասնագիտական 3 թեզ:

2024-2025 ուսումնական տարում «E-learning» հարթակում ներդրվել է ակադեմիական ազնվության ապահովման «Turnitin» գործիքը: Ուսումնական ստորաբաժանումների գիտական խորհուրդներում սահմանվել են մագիստրոսական թեզերի ինքնատիպության չափման շեմեր (%-տոկոս)՝ հիմք ընդունելով մասնագիտական առանձնահատկությունները: Հաշվետու ուսումնական տարվա բոլոր մագիստրոսական թեզերը գիտական ղեկավարների կողմից անցել են ինքնատիպության ստուգում: Մագիստրոսական թեզի ինքնատիպության տոկոսի միջին շեմը 62% է:

Միջազգայնացումը դիտարկվել է որպես կրթական առաջարկի մրցունակության բարձրացմանը նպաստող առանցքային գործոն՝ ուղղված համալսարանի միջազգային ճանաչելիության և ակադեմիական ներգրավվածության ընդլայնմանը: Այս համատեքստում կատարվել են մի շարք քայլեր, որոնք ուղղված են գլոբալ կրթական համակարգերի հետ համադրելիության ապահովմանը: Երևանի պետական համալսարանը միջազգային համագործակցության պայմանագրեր և համաձայնագրեր ունի աշխարհի շուրջ 50 երկրների 242 համալսարանների, հաստատությունների և միջազգային կազմակերպությունների հետ: Հաշվետու տարվա ընթացքում ստորագրվել են **17** պայմանագրեր արտասահմանյան բուհերի հետ:

Միջազգային համագործակցության շրջանակում 2024-2025 ուսումնական տարում լիցենզավորվել է «**Միջազգային և գործարար հաղորդակցություն»** մագիստրոսական կրթական ծրագիրը, որը, համաձայն երկու բուհերի միջև կնքված համագործակցության պայմանագրի, իրականացվելու է Լիլի համալսարանի (Ֆրանսիա) հետ կրկնակի դիպլոմի շնորհմամբ: Հաշվետու տարում ծրագրով հայտարարվել է ընդունելություն, և այժմ տվյալ կրթական ծրագրում սովորում են 12 ուսանողներ:

Բացի դրանից՝ մշակվել և լիցենզավորման են ներկայացվել օտար լեզվով բակալավրի, մագիստրոսական և ասպիրանտական ծրագրերի փաթեթներ:

Օտարալեզու կրթական ծրագրերի ամբողջական ցանկը

№	Faculty, Institute, Center	Specialty/ Bachelor's Degree	Specialty/Master's Degree
1	Institute of Pharmacy	Pharmacy	Pharmacy
2	Institute of Pharmacy		Pharmacy/Drug quality control
3	Chemistry	Food safety	Food safety
4	Faculty of Economics and Management	Management	MBA Data Science in Business
5	Geography and Geology		Tourism
6	Mathematics and Mechanics		Applied Statistics and Data Science
7	Biology	Biochemistry and Biotechnology	General and Medical Biochemistry
8	Centre for European studies		Human rights and democratization

9	Institute of Physics	Electrical Engineering and IT	
10	History		Cultural anthropology

Հաշվետու ժամանակահատվածում ապահովվել է հրավիրյալ դասախոսների ներգրավում (Ռուսաստան, ԱՄՆ, Գերմանիա, Ֆրանսիա, Հնդկաստան, Իրան և այլն), իրականացրել է միջազգային շարժունություն (**113 ուսանող, 4 ասպիրանտ, 64 մասնագետ և 36 վարչական աշխատակից**), ապահովել է ծրագրերի միջազգային հավատարմագրման նախապատրաստական աշխատանքները և ինքնագնահատման



մեխանիզմների ներդրումը:

«GEOTAK» միջբուհական համատեղ կրթական ծրագրի շրջանակում աշնանային և գարնանային կիսամյակներում ներդրվել են 4 դասընթացներ (1. «Տարածական վիճակագրություն», 2. «Գեոծրագրավորում (Python)», 3. «Գեոծրագրավորում (SQL)» 4. «Գեովիզուալիզացիա և թվային քարտեզագրություն»):

Հաշվետու ժամանակաշրջանում նախապատրաստվել և իրականացվել է ASIIN գերմանական հավատարմագրող գործակալության կողմից Մաթեմատիկայի և





մեխանիկայի ֆակուլտետի 6 կրթական ծրագրերի միջազգային հավատարմագրման գործընթացը:

ԵՊՀ-ն հաշվետու ժամանակահատվածում շարունակել է կատարել օտարերկրյա ուսանողների ընդունելության, ուսումնական գործընթացի կազմակերպման, խորհրդատվության և միջազգային կրթական ծրագրերի համակարգման աշխատանքները: 2024-2025 ուսումնական տարում ԵՊՀ-ում դասավանդել են **92**

օտարերկրյա դասախոսներ: Ուսանողների և շրջանավարտների հետ հետադարձ կապը ապահովելու նպատակով ԵՊՀ-ում կազմակերպվել են համապատասխան հարցումներ: Յուրաքանչյուր կիսամյակում հարցմանը մասնակցել է առկա ուսուցմամբ շուրջ **2400 ուսանող**, ինչը կազմում է առկա ուսուցմամբ սովորող ուսանողների ընդհանուր թվի **26 %-ը**, իսկ հեռակա ուսուցմամբ՝ գրեթե **230 ուսանող**, որը կազմում է **10.7 %**: Շրջանավարտների շրջանում անցկացված «ԵՊՀ-ում ստացած կրթությունից բավարարվածության վերաբերյալ» հարցմանը մասնակցել է **334 շրջանավարտ**, որոնք սովորել են առկա ուսուցմամբ (առկա ուսուցմամբ շրջանավարտների ընդհանուր թվի մոտ **11.5 %**) և **35 շրջանավարտ**, որոնք սովորել են հեռակա ուսուցմամբ (մոտ **6.9 %**):

ԵՊՀ-ում շարունակվել են աշխատաշուկայի պահանջներին համապատասխան կրթական առաջարկի ձևավորման քայլերը: Հաշվետու ժամանակահատվածում կատարվել են ուսանողների պրակտիկային առնչվող պլանավորված բոլոր գործողությունները: Կրթական ծրագրեր իրականացնող ստորաբաժանումներից նախապես ստացած հայտերի և ընդունող կողմերի հետ բանակցությունների արդյունքում կնքվել և գործող պայմանագրերին ավելացվել է 120 պայմանագիր՝ հաշվի առնելով ուսանողների՝ պրակտիկայից բավարարվածության արդյունքները: Հաշվետու ժամանակահատվածում մասնագիտական պրակտիկային մասնակցել են բակալավրիատի և մագիստրատուրայի (առկա և հեռակա) ավարտական կուրսերի 3503 ուսանողներ (բակալավրիատ՝ 2621, մագիստրատուրա՝ 882):

Մանկավարժի կրթական ծրագրով սովորող 439 ուսանողի համար կազմակերպվել է մանկավարժական պրակտիկա Երևանի և մարզերի հանրակրթական դպրոցներում: Հոգեբանական ուսումնագործնական լաբորատորիայի կողմից մշակվել է պրակտիկ հոգեբանների աշխատանքի համար անհրաժեշտ խորհրդատվական և սուպերվիզիոն ժամերի չափանիշը, ԵՊՀ 61 ուսանողի տրամադրվել է հոգեբանական անվճար խորհրդատվություն պրակտիկա անցնող մագիստրոսների ջանքերով, որոնք աշխատել են մասնագետների կողմից կազմակերպված անհատական և խմբային սուպերվիզիայի ներքո:

ԵՊՀ ակադեմիական գրագրության կենտրոնը շարունակել է նախորդ ուսումնական տարում մեկնարկած իր գործունեությունը: Կազմակերպվել է ակադեմիական գրագրությանը վերաբերող 7 դասախոսություն և սեմինար, որոնք անցկացրել են օտարերկրացի պրոֆեսորները (Ավստրիա, Գերմանիա, Պորտուգալիա, Ռումինիա, ՌԴ): Բացի դրանից՝ ներդրվել է ինտենսիվ անգլիալեզու դասընթաց, որը վարել է ԱՄՆ-ից ժամանած հրավիրյալ պրոֆեսոր:



Հաշվետու ժամանակահատվածում ԵՊՀ ասպիրանտուրա է ընդունվել.

- Առկա ուսուցմամբ անվճար հիմունքով 25 ասպիրանտ:
- Առկա ուսուցմամբ վճարովի հիմունքով 5 ասպիրանտ:
- Հեռակա ուսուցմամբ անվճար հիմունքով 26 ասպիրանտ:
- Հեռակա ուսուցմամբ վճարովի հիմունքով 7 ասպիրանտ:

Հաշվետու ժամանակահատվածում ԵՊՀ ասպիրանտուրայից ազատվել է 95 ասպիրանտ, որոնց շուրջ 36%-ը ստացել է գիտությունների թեկնածուի գիտական աստիճան:

ԵՊՀ-ում հայցորդ են ձևակերպվել 95 դիմորդներ՝

- 73-ը՝ աշնանային կիսամյակում,
- 22-ը՝ գարնանային կիսամյակում:

Հայցորդության համակարգից ազատվել են 59-ը, որոնց շուրջ 14%-ը ստացել է գիտությունների թեկնածուի գիտական աստիճան։

ԵՊՀ ՍԹԵՄ ավագ դպրոցը, բացի բնագիտամաթեմատիկական ուղղությունից, 2024-2025 ուսումնական տարվանից իրականացրել է նաև ընդունելություն հասարակագիտական ուղղությամբ։ 2024-2025 ուսումնական տարում ԵՊՀ ՍԹԵՄ դպրոցի դիմորդների թիվը կազմել է 99, ընդունվածների թիվը՝ 37, 2025-2026

ուսումնական տարում՝ 145, ընդունվածների թիվը՝ 63։ 2024-2025 ուսումնական տարում ԵՊՀ ՍԹԵՄ դպրոցի սովորողների թիվը կազմել է 65, 2025-2026 ուսումնական տարում՝ 123։

2024-2025 ուսումնական տարում դպրոցը ճանապարհել է իր առաջին 7 շրջանավարտներին։

2024–2025 ուսումնական տարվանից դպրոցը սկսել է բանակցել Միջազգային բակալավրիատի կազմակերպության հետ՝ «Դիպլոմա» ծրագրին անդամակցելու նպատակով։ Դպրոցի ներկայացրած հայտը հաստատվել է, և կազմակերպության պահանջներին համապատասխան՝ այս ուսումնական տարվա նոյեմբեր–դեկտեմբեր ամիսներին վերապատրաստման գործընթաց են անցնում դպրոցի տնօրենը և ծրագրի համակարգողը։

Ուսումնական արդյունքների ոլորտում դպրոցը շարունակում է արձանագրել նշանակալի ձեռքբերումներ։ Դպրոցի 11-րդ դասարանի երեք սովորողներ, հաղթահարելով առարկայական օլիմպիադաների բոլոր փուլերը, ճանաչվել են

հանրապետական փուլի դիպլոմակիրներ և արժանացել ՀՀ ԿԳՄՍ նախարարության սահմանած կրթաթոշակին։

Բարձր արդյունքներ են գրանցվել նաև «ԵՊՀ օլիմպիադա-2025» մրցույթում. դպրոցի տասը սովորողներ մրցանակակիր են ճանաչվել «Տրամաբանություն» առարկայի մրցույթում և պարգևատրվել համապատասխան դիպլոմներով. նրանցից չորսը՝ 1-ին կարգի, երեքը՝ 2-րդ կարգի, մեկը՝ 3-րդ կարգի։

Միջազգային մրցույթներում ևս դպրոցի ներկայացուցիչները պատվով են հանդես եկել։

• Մայիսի 10–17-ը ՌԴ «Սիրիուս» կրթական կենտրոնում անցկացված Կենսաբանության միջազգային բաց օլիմպիադայում դպրոցի 11-րդ դասարանի աշակերտն արժանացել է բրոնզե մեդալի։

• Հունիսի 26–30-ը Ինդոնեզիայի Բալի կղզում կայացած Կիրառական կենսաբանության միջազգային 5-րդ օլիմպիադայի (IABO) եզրափակիչ փուլում դպրոցը ներկայացրած 12-րդ դասարանի չորս սովորողներն էլ արժանացել են մեդալների՝ երկու արծաթե և երկու բրոնզե։

Դպրոցի երեք սովորող տարբեր անվանակարգերում («Արդյունաբերությունը Հայաստանում», «Բժշկությունը Հայաստանում», «Զբոսաշրջությունը Հայաստանում») հաղթանակ են տարել «Զարգացման նորարարական ռազմավարություններ»

միջազգային 8-րդ մրցույթում։

Բացի դրանից՝ դպրոցի մեկ սովորող ներկայացրել է դպրոցը Սանկտ Պետերբուրգում (ՌԴ) կազմակերպված «Երիտասարդ ստրատեգների կրթական ասոցիացիայի» միջտարածաշրջանային 4-րդ համաժողովին։

Ռազմավարական նպատակ 2 - Գիտահետազոտական արդյունքի բարելավում

Հաշվետու շրջանում համալսարանում գիտահետազոտական գործունեության զարգացումը ուղղորդվել է կառավարման համակարգերի հստակեցման, գործընկերային կապերի ընդլայնման, գիտելիքի կիրառելիության բարձրացման և միջազգային գիտական դաշտում համալսարանի ներկայացվածության ամրապնդման ընդհանուր նպատակով: Այս գործընթացում կարևոր է դարձել գիտության, կրթության և բուհի մյուս հիմնական գործառույթների փոխկապակցվածության ապահովումը, ինչը պահանջել է ներքին մեխանիզմների վերանայում և նոր գործիքների ներդրում: Շարունակական ներքին ուսումնասիրությունները հնարավորություն են տվել բացահայտելու գիտական միջավայրում առկա խնդիրներն ու թերությունները, ինչպես նաև որոշելու այն առաջնահերթությունները, որոնց լուծումն անհրաժեշտ է համակարգի արդյունավետությունը բարձրացնելու համար:

Գիտական գործունեության կայուն առաջընթացի համար առաջնահերթ է նաև արտաքին ռեսուրսների ներգրավումը: Հաշվետու տարում ընդլայնվել են համալսարանի հարաբերությունները պետական, մասնավոր և միջազգային կառույցների հետ՝ նպատակ ունենալով ստեղծելու համաֆինանսավորման մոդելներ և ապահովելու երկարաժամկետ գիտական ծրագրերի իրականացումը: Այս գործընթացները ոչ միայն ավելացրել են արտաքին աջակցության ծավալը, այլև բարձրացրել են համալսարանի կարողությունը՝ նախաձեռնելու ավելի մեծ մասշտաբի հետազոտական նախագծեր:

Զուգահեռաբար, ուշադրության առանցքում է եղել գիտելիքի առևտրայնացման և արդյունաբերության հետ փոխգործակցության ուղղությունը: Մտավոր սեփականության կառավարման մեխանիզմների կանխատեսելի և հստակ համակարգի ձևավորումը և տարբեր ոլորտների գործընկերների հետ ուղղակի շփումների ընդլայնումը նպաստել են գիտական արդյունքների կիրառական օգտագործման հնարավորություններին: Այս համատեքստում անցկացվել են հանդիպումներ ոլորտային գործընկերների հետ՝ մշակելու մեխանիզմներ, որոնք հնարավորություն կտան համալսարանական գիտելիքը դարձնելու տնտեսության մեջ կիրառվող արդյունք:

Միջազգային գիտական ինտեգրումը և համալսարանի տեսանելիության բարձրացումը ևս մեր ռազմավարական առաջնահերթություններից են: Շարունակվել է աշխատանքը միջազգային գիտական հարթակներում ներկայացվածության ընդլայնման, գործընկեր համալսարանների և հետազոտական կենտրոնների հետ համատեղ ծրագրերի իրականացման, ինչպես նաև գիտական արդյունքների թվային ներկայացման հարթակների արդիականացման ուղղությամբ: Այս մոտեցումը հնարավորություն է տվել ամրապնդելու համալսարանի դիրքը միջազգային գիտական ցանցերում և բարձրացնելու գիտահետազոտական գործունեության ճանաչելիությունը:

Այս համահունչ գործողությունները ձևավորել են գիտական գործունեության այնպիսի էկոհամակարգ, որտեղ կառավարման բարելավումը, համագործակցության ընդլայնումը, արդյունաբերության հետ կապը և միջազգային ինտեգրումը դիտարկվում են որպես միասնական գործընթաց՝ ուղղված համալսարանի գիտական զարգացման և մրցունակության աճին։

ՀՀ Կառավարության 2023 թվականի դեկտեմբերի 21-ի N 2298-Ն որոշմամբ հաստատված կարգավորումների հիման վրա և «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի գիտական խորհրդի 2024 թվականի փետրվարի 7-ի թիվ 11/1 որոշման համաձայն՝ դեկտեմբերի 23-24-ը կազմակերպվել է գիտական կազմի համալրման մրցութային ընտրության երրորդ փուլը։ Նախորդ երկու փուլերն անցկացվել են



սահմանված ընթացակարգերի համաձայն. առաջին փուլին մասնակցած 145 գիտաշխատողից 25-ը չեն բավարարել պահանջները, երկրորդ փուլին մասնակցած նույն թվով մասնակիցներից 32-ը չեն հաղթահարել նվազագույն շեմը։ Երրորդ փուլին մասնակցել է 74 գիտաշխատող, որոնցից 12-ը չեն հաղթահարել ընթացակարգային պահանջները։

Գիտահետազոտական գործունեության խթանման նպատակով արդիականացվել է ԵՊՀ աշխատակիցների միասնական հաշվետվողականության համակարգը (intranet.ysu.am)՝ ուղղված գիտական արդյունքների համակարգված հավաքագրմանը և դրանց միջազգային տեսանելիության բարձրացմանը։ 2024-2025 թվականներին համակարգում գրանցվել է 27 մենագրություն, 245 գիտաժողովի նյութ և 1225 գիտական

հոդված, որոնցից 595-ը՝ ՄԳՇ, 346-ը՝ ԲՈԿ ընդգրկվածությամբ, իսկ 142-ը՝ ԵՊՀ գիտական հանդեսներում տպագրված աշխատություններ։

Հաշվի առնելով ԵՊՀ-ի և Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի գիտական քաղաքականության առաջնահերթություններն ու ընդհանրությունները՝ ԵՊՀ աշխատակիցների գիտահետազոտական գործունեությունը խրախուսելու և դրա արդյունքները միջազգայնացնելու նպատակով միջազգային գիտատեղեկատվական շտեմարաններում ներառված առաջատար ամսագրերում կամ հրատարակչություններում հրապարակված 50 հոդվածներ երաշխավորվել են ֆինանսավորման, որոնցից 6-ի ֆինանսավորումը՝ ընդհանուր 5.984.461 ՀՀ դրամ, փոխանցվել է համալսարանին։



Շարունակվել է ԵՊՀ մտավոր սեփականության քաղաքականության (Intellectual Property Policy) նախագծի մշակումը, այդ թվում՝ փորձագիտական կարծիքների հավաքագրումը։ Մտավոր սեփականության փաստաթղթավորման, արտոնագրային գրանցումների և շահառուներին խորհրդատվական աջակցության տրամադրման աշխատանքների արդյունքում հաշվետու ժամանակահատվածում գրանցվել է **5** նոր արտոնագիր։

Կատարվել են 2022 թվականին երաշխավորված 5 ներքին դրամաշնորհների և 2024 թվականին Արցախից բռնի տեղահանվածների հիմնախնդիրներին նվիրված 5 դրամաշնորհների աշխատանքները։

Գիտական միջավայրի խթանման կարևոր գործիք են դարձել գիտական և կրթական գործուղումները։ ԵՊՀ 78 աշխատակից ստացել է ճանապարհորդական դրամաշնորհ, իսկ ՀՀ ԲԿԳԿ-ն միջազգային գիտական համագործակցության ակտիվացման նպատակով 9 աշխատակցի տրամադրել է լրացուցիչ ֆինանսավորում գիտական գործուղումների համար, որոնցից 7-ի համար՝ ընդհանուր 2.405.087 ՀՀ դրամ, փոխանցվել է համալսարանին։

ՀՀ բուհերի շարքում ԵՊՀ-ն Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի հետ արդյունավետ համագործակցության առաջատարն է։ Դրա վկայությունը 2025 թվականին 88 գիտական թեմաների ֆինանսավորման երաշխավորումն է

(«Փորձարարական մշակումների նախագծեր-2025», «Ասպիրանտների և երիտասարդ

հայցորդների հետազոտությունների աջակցության ծրագիր-2025», «Մասնագիտական վերապատրաստում-2025»):

Վերջին տարիներին ժողովրդագրության թեման դարձել է առանցքային ինչպես տեղական, այնպես էլ միջազգային փորձագիտական մակարդակներում՝ պայմանավորված բնակչության ծերացման, նվազման, միգրացիոն տատանումների և այլ խնդիրների սրացմամբ: Հայաստանը նույնպես կանգնած է ժողովրդագրական մարտահրավերների առաջ. արձանագրվում են ծնելիության, միգրացիայի, կյանքի տևողության, ծերության հետ կապված խնդիրներ: Այս համատեքստում ակնհայտ դարձավ, որ երկրում բացակայում է համակարգված գիտահետազոտական, վերլուծական և կրթական հարթակ ժողովրդագրության ոլորտում: Խնդիրներն ուսումնասիրելու, լուծումներ առաջարկելու, ինչպես նաև քաղաքականություններ մշակելու նպատակով հաշվետու ժամանակահատվածում ստեղծվեց ԵՊՀ ժողովրդագրական հետազոտությունների կենտրոնը՝ համալսարանի, ՄԱԿ-ի բնակչության հիմնադրամի (UNFPA) և ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ջանքերով:

Առաջիկա տարիներին կենտրոնը կդառնա գիտական և վերլուծական հենք՝ զբաղվելով լայնածավալ

հետազոտություններով ժողովրդագրության ոլորտում: Հիմնական ուղղությունները կլինեն՝

- ծնելիության մակարդակի և միտումների վերլուծություն,
- կյանքի տևողության և առողջ երկարակեցության հետ կապված հարցեր, ակտիվ ծերության, տարեցների ներգրավվածության և կենսակերպի բարելավմանն ուղղված ուսումնասիրություններ,
- մահացության ցուցանիշների ուսումնասիրություն և կանխարգելման հնարավոր ուղիներ,
- միգրացիոն գործընթացների վերլուծություն՝ ներառյալ արտագաղթը և ներգաղթը:

Համալսարանում գիտական կյանքի կարևոր իրադարձություններից էր 2025 թվականի մայիսի 8-14-ը կազմակերպված «Հաշվետու գիտաժողով-2025»-ը, որի նպատակն էր ամփոփել ԵՊՀ գիտական ստորաբաժանումների գործունեությունը, ներկայացնել գիտական հետազոտությունների արդյունքները և քննարկել հետագա ծրագրերը: Գիտաժողովն ուղեկցվել է լրացուցիչ սեմինարներով և ամփոփիչ կոնֆերանսներով՝ ապահովելով գիտական հաղորդակցության և համագործակցության ընդլայնման հնարավորություն:

2025 թվականի հուլիսի 27-ից օգոստոսի 2-ը ԵՊՀ-ում կազմակերպվել է «Սիգման» միջազգային դպրոցը՝ Ֆոտոնիկայի և արհեստական բանականության լաբորատորիայի, «OPTICA» կազմակերպության և Բրյուսելի ազատ համալսարանի համատեղ նախաձեռնությամբ: Ծրագիրն ընդգրկել է աշխարհի առաջատար բուհերի գիտնականների դասախոսություններ և հնարավորություն տվել ուսանողներին խորացնելու գիտելիքները լազերային ֆիզիկայի և դրա կիրառությունների ոլորտում:

ՀՀ ԲԿԳԿ-ի հետ համաֆինանսավորմամբ 2025 թվականին կազմակերպվել է գիտական 9 միջոցառում և երիտասարդ գիտնականների 2 դպրոց՝ ընդհանուր 10.725.000 ՀՀ դրամ ֆինանսավորմամբ, որից 10.062.000 ՀՀ դրամը տրամադրել է ԵՊՀ-ն: Բացի դրանից՝ ԵՊՀ-ն համակազմակերպիչ է եղել մի շարք

միջազգային գիտաժողովների, ներառյալ՝ «Գիտաչափության և տեղեկատվաչափության միջազգային միավորման 20-րդ միջազգային համաժողովի» և «Նոր զարգացող միտումները քիմիայում» խորագրով գիտաժողովի:

Գիտահետազոտական ենթակառուցվածքների զարգացման ուղղությամբ 2025 թվականին ՀՀ ԲԿԳԿ-ի կողմից ԵՊՀ-ին նվիրաբերվել է 10 նոր սարք, իսկ սարքավորումների ձեռքբերման համար հատկացվել է ավելի քան 1.075.814.156 ՀՀ դրամ: «Fast ADVANCE» դրամաշնորհային ծրագրի շրջանակում տրամադրվել է 5.636.351 ՀՀ դրամ, ինչի արդյունքում ձեռք է բերվել ավելի քան 23 սարք և սարքավորում:

Երևանի պետական համալսարանում շարունակվել են միջազգային առաջատար հրատարակչությունների էլեկտրոնային ռեսուրսների ձեռքբերման և գործող բաժանորդագրությունների պահպանմանն ուղղված աշխատանքները, որոնց նպատակն է ապահովել գիտական համայնքի՝ ժամանակակից գիտատեղեկատվական շտեմարաններին հասանելիությունը և բարձրացնել համալսարանի հետազոտական միջավայրի մրցունակությունը: Բանակցությունների արդյունքում ձեռք են բերվել մի շարք միջազգային գիտական հարթակների համար առավել նպաստավոր, զեղչված բաժանորդագրային պայմաններ, ինչը հնարավորություն է տվել ընդլայնելու համալսարանի էլեկտրոնային տեղեկատվական պաշարների շրջանակը:

2025 թվականին ԵՊՀ Սարգիս և Մարի Իզմիրլյանների անվան գրադարանը ձեռք է բերել «Brill» հրատարակչության «Brill Humanities & Social Sciences Journal Collection» էլեկտրոնային հավաքածուն, ինչպես նաև բաժանորդագրվել է «Cambridge Core» և «Oxford Academic» գիտական հարթակներին: Շարունակվել է համագործակցությունը «JSTOR» թվային գրադարանի և «EBSCO» տվյալների բազայի հետ, որոնք ապահովում են տարբեր գիտական ուղղություններով անհրաժեշտ աղբյուրների մատչելիությունը:

«EIFL» կազմակերպության հետ համագործակցության շրջանակում, որի անդամ է Հայաստանի գիտատեղեկատվական ազգային համալիրը (ՀԹԳԱ), համալսարանի գրադարանին հասանելի են դարձել 12 ոչ կոմերցիոն էլեկտրոնային ռեսուրսներ: Համագործակցության արդյունքում «EIFL»-ը կնքել է մի շարք համաձայնագրեր միջազգային հրատարակիչների հետ՝ ապահովելով հոդվածների ինչպես անվճար, այնպես էլ զգալիորեն զեղչված հիմունքներով հրապարակման հնարավորություններ: 2025 թ. գրադարանը բաժանորդագրվել է «Brill» հրատարակչության «Brill Humanities & Social Sciences Journal Collection» էլեկտրոնային պաշարին, «Cambridge Core», «Oxford Academic» գիտական հարթակներին: Շարունակվել է բաժանորդագրությունը «JSTOR» թվային գրադարանին, «EBSCO» տվյալների հարթակին: «EIFL»-ի հետ համագործակցության շրջանակում ԵՊՀ գրադարանին հասանելի են 12 ոչ կոմերցիոն պաշարներ: Սույն համագործակցության շրջանակում «EIFLW-ը համաձայնագրեր է կնքել հրատարակիչների հետ, որոնք տրամադրում են անվճար կամ զեղչված հիմունքներով հոդվածների մշակում:

Հաշվետու ժամանակահատվածում համալսարանականներին հասանելի են եղել «Research4Life» հրատարակչությունների էլեկտրոնային պաշարները, «EDWARD ELGAR» հրատարակչության 80 անգլերեն դասագրքեր, ինչպես նաև «Bentham Science Publishers» հրատարակչական ընկերության էլեկտրոնային շտեմարանները՝ թե՛ կարդալու, թե՛ անվճար հոդված հրապարակելու հնարավորությամբ: Բացի դրանից՝ «Brill» հրատարակչությունը տրամադրել է մեկամսյա փորձնական հասանելիություն, որի ընթացքում համալսարանը գրանցել է շուրջ 370 մուտք հիմնականում «Humanities & Social Sciences» ամսագրերի հավաքածուից:

Մինչև 2025 թվականի դեկտեմբերը համալսարանականները շարունակել են օգտվել «IOP Journals» (Institute of Physics) հրատարակչության թվային հավաքածուներից, իսկ «ScienceDirect» հարթակի գիտական պաշարները, այդ թվում՝ ամսագրերն ու գրքերը, հասանելի կլինեն մինչև 2030 թվականի ապրիլը: Միաժամանակ, հասանելի են «Scopus» և «Web of Science» հեղինակավոր շտեմարանները, որոնք կարևոր դեր ունեն համալսարանի հետազոտական արդյունքների տեսանելիության բարձրացման և միջազգային գիտական գործընթացներին ինտեգրվելու համար:

Գրադարանը շարունակել է նաև էլեկտրոնային հոդվածների ձեռքբերման ծառայությունը գերմանական «Subito» շտեմարաններից, որոնց պահանջարկի հետ կապված ամբողջական ծախսերը հոգացել է համալսարանը՝ ապահովելով հետազոտողների համար անհրաժեշտ նյութերի անխափան առկայությունը:

Գրադարանի ֆոնդերի համալրման գործընթացը հաշվետու տարում իրականացվել է շարունակական և նպատակային ձևով: Ընդհանուր առմամբ, ձեռք է բերվել 1.623

անուն 9.508 միավոր գրականություն: Նախաձեռնվել են գնման նոր գործընթացներ՝ ուղղված Հայաստանյան 12 հրատարակչություններից 452 անուն 1.298 միավոր գրքերի ձեռքբերմանը՝ ապահովելու համալսարանի կրթական և գիտական պահանջների բազմակողմանի բավարարումը:

Գրադարանի համալրման գործում կարևոր է «Գալուստ Գյուլբենկյան» հիմնադրամի հետ համագործակցությունը, որի շրջանակում հիմնադրամը 2024–2026 թթ. յուրաքանչյուր տարվա համար հաստատել է 15.000 եվրո ֆինանսավորում գրքերի ձեռքբերման նպատակով: 2024 թ. ընթացքում հիմնադրամի աջակցությամբ ձեռք է բերվել 128 գիրք, իսկ 2026 թ. ծրագրի բյուջեն հաստատված է նույն չափով՝ ապահովելով նախաձեռնության շարունակականությունը:

2025 թ. գրադարանը մեկ տարով բաժանորդագրվել է 10 անուն թերթի, «Տեղեկագիր. ՀՀ օրենքներ և ենթաօրենսդրական ակտեր-2025» փաթեթին և «Գիտության աշխարհում» հանդեսին:



2024–2025 ուսումնական տարում ԵՊՀ բիզնես ինկուբատորը շարունակել է ձևավորել գիտահենք ձեռնարկատիրության և գիտելիքի առևտրայնացման էկոհամակարգը, որն ուղղված է համալսարանում կատարվող հետազոտությունների կիրառականացմանը, տեխնոլոգիական լուծումների զարգացմանը և նորարարական թիմերի աջակցությանը: Իր գործունեությամբ Բիզնես ինկուբատորը նպաստել է գիտահետազոտական գաղափարները բիզնես նախագծերի վերածելու գործընթացներին, բարձր տեխնոլոգիական ոլորտում կադրային ներուժի ձևավորմանը և համալսարան–արդյունաբերություն համագործակցության ընդլայնմանը:

Գիտահետազոտական և նորարարական գաղափարների առևտրայնացման գործընթացները շարունակվել են մի քանի փոխկապակցված ձևաչափերով: Նորարարական և գիտահետազոտական գաղափարների մրցույթի շրջանակում, որը անցկացվել է մի շարք գործընկեր կազմակերպությունների մասնակցությամբ և միջազգային կառույցների աջակցությամբ, դիմած 190 թիմերից ընտրվել է 10-ը: Բիզնես ինկուբատորի կողմից մշակված և իրականացված հատուկ ինկուբացիոն ծրագրի արդյունքում թիմերին տրամադրվել են գործնական գիտելիքներ, մենթորություն և զարգացման գործիքներ, ինչի արդյունքում 6 թիմ ֆինանսավորում է ստացել գաղափարների հետագա իրագործման համար: Նույն նպատակին ծառայել է նաև «Ազգային գաղափարատոն. ԵՊՀ-2025» երկօրյա միջոցառումը, որին մասնակցել են ավելի քան 90 երիտասարդներ Հայաստանի տարբեր տարածաշրջաններից՝ ձեռք բերելով նորարարական նախագծերի մշակման հմտություններ:

Գիտահենք ձեռնարկատիրության խթանման մյուս կարևոր նախաձեռնություններից էր «Mini MBA. հոդվածից դեպի բիզնես» ծրագիրը, որը նպատակ ունի տրամադրելու բիզնեսի հիմնարար գիտելիքներ՝ մասնակիցներին տրամադրելով առաջնորդության, ռազմավարական մտածողության և ներկայացման հմտություններ, որոնք անհրաժեշտ են ժամանակակից տեխնոլոգիական և նորարարական միջավայրերում հաջողության հասնելու համար: Այն բաղկացած է հետևյալ փուլերից՝ *դասընթացներ, մենթորություն, բիզնես գաղափարներ ձևավորելու աջակցություն և ֆինանսավորման դիմելու հայտի նախապատրաստում:*

Միաժամանակ մշակվել և այժմ արդեն պատրաստ է կիրառման PhD աքսելերացիայի ծրագիրը, որը նախատեսված է ասպիրանտների գիտական արդյունքների արագ կիրառականացման և ձեռնարկատիրական հմտությունների զարգացման համար:

Հաշվետու տարում մշակվել է նաև ԵՊՀ գիտական լաբորատորիաների արդյունքների առևտրայնացման գործառնական մոդելը, որի նպատակն է համակարգել գիտահետազոտական արդյունքների առևտրայնացման գործընթացները:

ԵՊՀ հրատարակչության կողմից հաշվետու տարում հրատարակվել է հումանիտար, հասարակագիտական, բնական և ճշգրիտ գիտությունների ուղղությամբ 42 աշխատություն՝ մենագրություններ, դասագրքեր, ուսումնական, ուսումնամեթոդական ձեռնարկներ, դասախոսություններ և այլն:

Համալսարանի «Translation Studies: Theory and Practice» ամսագիրն ընդգրկվել է «Scopus» հեղինակավոր շտեմարանում: Ներկայում միջազգային շտեմարաններում գրանցված ամսագրերի քանակով և միջազգային չափանիշներին համապատասխան տպագրվող ամսագրերի թվով ԵՊՀ-ն ինստիտուցիոնալ առումով ՀՀ-ում բացարձակ առաջատար է:

Այս տարի առաջին անգամ ԵՊՀ հրատարակչական քաղաքականության մեջ (որոշ գրքերում և ամսագրերում) ներդրվել են արհեստական

բանականության կիրառման սահմանափակումներին ու վերահսկմանը վերաբերող տարրեր:



Հաշվետու տարում հիմնադրվել է միջազգային չափանիշներին համապատասխանող երկու ամսագիր՝ «Journal of Innovative Solutions for Eco-Environmental Sustainability» և «Historia: Philosophy & Theory» գիտական ամսագրերը: «Բանբեր Երևանի համալսարանի: Միջազգային հարաբերություններ» ամսագիրը վերաբրենդավորվել է՝ նոր ISSN-ով և նոր վերնագրով ներկայանալով գիտական հանրությանը՝ «YSU Journal of International Affairs»:

ԵՊՀ գիտական ամսագրերը շարունակաբար ընդլայնում են իրենց «ներկայությունը» միջազգային հեղինակավոր շտեմարաններում՝ ներառվելով և ինդեքսավորվելով այնպիսի հարթակներում, ինչպիսիք են EBSCO, DOAJ, ERIH Plus, Index Copernicus, Liguilist, eLibrary, CyberLeninka, MIAR, zbMATH, MathNet.ru և այլն: Google Scholar հարթակի տվյալների համաձայն՝ հաշվետու ժամանակահատվածում արձանագրվել է համալսարանական ամսագրերին կատարվող հղումների զգալի աճ:

Միաժամանակ, ԵՊՀ երեք գիտական ամսագիր **«Index Copernicus»** շտեմարանում ստացել է թվային ինդեքս, որոնցից արդեն երկրորդն է հատել 100 միավորի շեմը: Էականորեն աճել է նաև **«Web of Science (WoS)»** և **«Scopus»** շտեմարաններում ընդգրկված ամսագրերից ԵՊՀ գիտական պարբերականներին կատարվող հղումների քանակը:

Ներկայում համալսարանի երկու գիտական ամսագիր գտնվում է **«WoS/Scopus»** շտեմարաններում ինդեքսավորման նպատակով գնահատման և դիտարկման գործընթացում:

Ռազմավարական նպատակ 3 - Միջավայրի և ենթակառուցվածքների համապատասխանեցում համալսարանական շահառու բոլոր խմբերի պահանջներին

Հաշվետու ժամանակահատվածում իրականացվել և նախանշվել են մի շարք համակարգային միջոցառումներ՝ ուղղված ԵՊՀ ուսումնական և ենթակառուցվածքային միջավայրի բարելավմանը, ուսանողակենտրոն մոտեցման ամրապնդմանը և ժամանակակից կրթական պահանջներին համապատասխանեցմանը:

Այդ շրջանակում կարևոր է լսարանների և լաբորատորիաների բաշխման սկզբունքների վերանայումը՝ նպատակ ունենալով առավել արդյունավետ օգտագործելու ուսումնական տարածքները և դրանք հարմարեցնելու ուսանողների կրթական ու ակադեմիական կարիքներին: Զուգահեռաբար անհրաժեշտ է կատարել ուսումնական տարածքների գործառութային հարմարեցման աշխատանքներ՝ ուղղված ուսուցման որակի և ուսումնական գործընթացի արդյունավետության բարձրացմանը:

Հաշվետու ժամանակահատվածում ուշադրություն է դարձվել տարածքային տեղեկատվության հասանելիության ապահովմանը և միասնական համալսարանական մշակույթի ձևավորմանը: Այդ նպատակով նախատեսվել և կատարվել են թվային և ֆիզիկական տեղեկատվական նավիգացիայի գործիքների ներդրման աշխատանքներ, ինչպես նաև լրամշակվել են համալսարանական սոցիալական մշակույթին և արարողակարգին առնչվող մոտեցումները:

Հաշվետու տարվա ընթացքում իրականացվել են համալսարանի էլեկտրական ենթակառուցվածքների ծանրաբեռնվածության համալիր հաշվարկներ, ինչի արդյունքում կազմվել է միասնական տեղեկատու, որտեղ արտացոլված են ԵՊՀ մասնաշենքերը սպասարկող բոլոր էլեկտրական ենթակայանների փաստացի ծանրաբեռնվածության ցուցանիշները, ինչպես նաև դրանց առկա ազատ հզորությունները: Տվյալ տեղեկատուն ծառայում է ենթակառուցվածքների արդյունավետ պլանավորմանը և զարգացման գործընթացներին: Բացի դրանից՝ գերհզոր հաշվարկային համակարգի շահագործման ապահովման նպատակով վերագործարկվել է առանձին տրանսֆորմատոր, որը նախատեսված է բացառապես նշված համակարգի էլեկտրամատակարարման համար:



Հաշվետու ժամանակահատվածում ԵՊՀ լսարանների, լաբորատորիաների և ընդհանուր օգտագործման տարածքների նորոգումն ու կահավորումը միջազգային նորմերին և համալսարանի գործառնական պայմաններին համապատասխան չափանիշների սահմանման նպատակով իրականացվել է միջազգային փորձի համակողմանի ուսումնասիրություն: Մասնավորապես՝ ուսումնասիրվել են ամերիկյան մի շարք բարձրագույն ուսումնական հաստատությունների կիրառվող չափանիշները, ինչպես նաև կազմակերպվել է ճանաչողական այց Վարշավայի և Կրակովի համալսարաններ՝ հետսոցիալիստական Լեհաստանում եվրոպական չափանիշների տեղայնացման փորձի ուսումնասիրության նպատակով: Ստացված փորձի և ներքին գնահատման արդյունքների հիման վրա մշակվել են

համապատասխան չափանիշներ, որոնք ներկայացվել և հաստատվել են ԵՊՀ ռեկտորի կողմից։

Սահմանված չափանիշների հիման վրա մշակվել է տարածքների վերանորոգման և կահավորման 2025 թվականի պլան-ժամանակացույցը, որը հաստատվել է ռեկտորի հրամանով։ Նշված չափանիշների և պլան-ժամանակացույցի շրջանակում հաշվետու տարում իրականացվել են ռազմավարությամբ նախատեսված տարածքների վերանորոգման և կահավորման աշխատանքները։

Նոր չափանիշներին համապատասխան և հաստատված պլան-ժամանակացույցի համաձայն՝ հաշվետու տարում վերանորոգվել և կահավորվել են 10 հոսքային և 5 քննական լսարաններ Քիմիայի և Կենսաբանության ֆակուլտետներում (յուրաքանչյուր ֆակուլտետում՝ 2 լաբորատորիա), ինչպես նաև 2 լաբորատորիա Ֆիզիկայի ինստիտուտում։ Բացի դրանից՝ նորոգվել են Սոցիոլոգիայի ֆակուլտետի, Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի, ինչպես նաև Ֆիզիկայի ինստիտուտի միջանցքները։ Համալսարանի ընդհանուր օգտագործման տարածքների վերանորոգման և կահավորման ժամանակ հաշվի է առնվել նաև ուսանողների համար առանձին հանգստի և աշխատանքային հնարավորությունների ստեղծման անհրաժեշտությունը։

Պրոֆեսորադասախոսական անձնակազմի համար նախատեսված աշխատանքային տարածքների՝ աշխատակիցների կարիքներին համապատասխանեցման հայեցակարգի շրջանակում հաշվետու ժամանակահատվածում պիլոտային

տարբերակով ստեղծվել են համապատասխան տարածքներ Կենսաբանության ֆակուլտետում: Միաժամանակ հաշվարկվել է լսարանների ծանրաբեռնվածությունը, ինչի արդյունքում վերհանվել են ինչպես առկա խնդիրները, այնպես էլ զարգացման հնարավորությունները համալսարանի այլ ֆակուլտետներում: Կատարված հաշվարկները ցույց են տվել, որ աշխատանքային նման տարածքների ստեղծումը հնարավոր է իրականացնել առկա պայմաններում՝ առանց լրացուցիչ ֆինանսական միջոցների ներգրավման՝ լսարանների ծանրաբեռնվածության օպտիմալացման միջոցով:

Հաշվետու տարում կատարվել են համալսարանի տեսաձայնագրման համակարգի արդիականացմանն ուղղված անհրաժեշտ բոլոր աշխատանքները: Նոր տեսաձայնագրող սարքավորումները տեղադրվել են, իսկ համակարգի ամբողջական գործարկումը նախատեսվում է իրականացնել հաջորդ հաշվետու ժամանակահատվածի սկզբին:

Անվտանգության համակարգերի արդիականացման շրջանակում համալսարանի տարածքներում տեղադրվել են ամբողջությամբ նոր հակահրդեհային համակարգեր, որոնք գործում են բոլոր լաբորատորիաներում, նորոգված լսարաններում և աշխատասենյակներում, ինչպես նաև գրադարանի ընթերցասրահներում և գրապահոցներում: Նշված համակարգերը միացված են ընդհանուր SOS արագ արձագանքման համակարգին՝ ապահովելով անվտանգության վերահսկման միասնական և արդյունավետ մեխանիզմ:

Համալսարանում ֆիզիկական ենթակառուցվածքների արդյունավետ պահպանման և երկարաժամկետ շահագործման ապահովման նպատակով մշակվել է լսարանային

գույքի օգտագործման և անվտանգության ապահովման կանոնակարգի նախագիծ, որի վերաբերյալ իրազեկման և ներդրման աշխատանքները նախատեսվում է իրականացնել հաջորդ հաշվետու ժամանակահատվածում:

Պլան-ժամանակացույցով նախատեսված վերանորոգման աշխատանքներին զուգահեռ՝ դրամաշնորհային ծրագրերի իրականացման և գործընկեր կազմակերպությունների հետ համագործակցության արդյունքում իրականացվել են մի շարք հիմնանորոգման և կահավորման աշխատանքներ: Մասնավորապես՝ հիմնանորոգվել և համապատասխան տեխնիկական միջոցներով կահավորվել են Ֆիզիկայի ինստիտուտի ֆոտոնիկայի և օպտիկայի կենտրոնը, Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի ինտերակտիվ լսարանը, ինչպես նաև Եվրոպական լեզուների և հաղորդակցության ֆակուլտետի հոսքային լսարանը:

Հաշվետու շրջանի կարևոր ուղղություններից մեկը ենթակառուցվածքների զարգացման գործընթացներում կայունության և ներառականության սկզբունքների համակարգային ինտեգրումն էր՝ որպես որակական չափանիշ: Այդ շրջանակում վերանայվել և արդիականացվել են մի շարք ընթացակարգեր՝ ներառականության և Կայուն զարգացման նպատակների (ԿԶՆ) չափանիշներին համապատասխանեցման նպատակով: Միաժամանակ մշակվել են «Կանաչ համալսարան» նախաձեռնության հայեցակարգային մոտեցումներ և պիլոտային լուծումներ, որոնք ներառվել են տարածքների վերանորոգման և կահավորման չափանիշների ձեռնարկում: Շարունակվել է ԵՊՀ տարածքում տեղակայված տեղեկատվական ցուցանակների արդիականացման և համալրման գործընթացը: Մարքեթինգի բաժինը կազմակերպել է ցուցանակների պատրաստման ծառայության գնման գործընթացը, ստորաբաժանումների կողմից ներկայացված զեկուցագրերի հիման վրա հավաքագրել և համակարգել է անհրաժեշտ տեղեկատվությունը, ապահովել է տպագրության կազմակերպումը և տեղադրման աշխատանքները: Հաշվետու տարում տեղադրվել է 301 միավոր նոր տեղեկատվական ցուցանակ, ինչը զգալիորեն բարելավել է համալսարանական միջավայրի տեղեկատվական հասանելիությունն ու կողմնորոշման հնարավորությունները:



Բացի դրանից՝ իրականացվել են տեղեկատվական և տեսողական բովանդակության պատրաստման և տեղադրման աշխատանքներ ԵՊՀ կենտրոնական մասնաշենքի թվային էկրանների համար: Թվային հարթակների միջոցով ներկայացվել են համալսարանական միջոցառումների հայտարարություններ, ուսումնական գործընթացներին վերաբերող տեղեկություններ և ֆոտոպատմություններ՝ պարբերաբար թարմացվող ձևաչափով: Հաշվետու ժամանակահատվածում շարունակվել են համալսարանական անլար ինտերնետ կապի սփռման ընդլայնման և որակի բարելավման աշխատանքները: ԵՊՀ մասնաշենքերում տեղադրվել է 250-ից

ավելի **Wi-Fi 5** տեխնոլոգիայի սարք։ Ավարտվել են նոր հեռախոսակայանի համար անհրաժեշտ սարքավորումների ձեռքբերման, ինչպես նաև մասնաշենքերում, աշխատասենյակներում և սերվերային սենյակներում դրանց տեղադրման և կարգաբերման աշխատանքները։

Տեղադրվել և շահագործման է հանձնվել նոր միջցանցային անվտանգության համակարգ (Firewall), որը հնարավորություն է տալիս ապահովելու առավել բարձր թողունակությամբ ինտերնետ կապ. մասնավորապես՝ մուտքային կապի թողունակությունը նախկին 1 Գբ/վ ցուցանիշի փոխարեն կարող է հասնել մինչև 10 Գբ/վ՝ կախված ինտերնետային ծառայություն մատուցողի տեխնիկական հնարավորություններից։ Միաժամանակ, հին ինտերնետային բաժանարար սարքերը փոխարինվել են կառավարվող ցանցային բաժանարարներով (managed switch)։ Ամբողջությամբ արդիականացվել են 1-ին, 4-րդ, 5-րդ, 6-րդ և 8-րդ մասնաշենքերի ներշենքային և միջմասնաշենքային ցանցային գլխավոր կապուղիները։ Ընդհանուր առմամբ տեղադրվել է 50-ից ավելի կառավարվող ցանցային բաժանարար, և անցկացվել շուրջ 5100 մետր նոր ցանցային հաղորդալարային ենթակառուցվածք։

Ռազմավարական նպատակ 4 - Մարդկային ռեսուրսի զարգացում և համալրում

Հաշվետու ժամանակահատվածում համալսարանում իրականացվել են մարդկային ռեսուրսների զարգացմանն ուղղված համապարփակ միջոցառումներ՝ նպատակ ունենալով բարձրացնելու վարչական, կրթական և գիտահետազոտական կազմի մասնագիտական կարողությունները և արդյունավետությունը: Այդ գործընթացների հիմքում դրվել է կարիքահենք մոտեցումը, որի շրջանակում կատարվել են կարողությունների գնահատումներ և կազմակերպվել նպատակային վերապատրաստումներ՝ համապատասխանեցված աշխատակազմի մասնագիտական զարգացման իրական պահանջներին:

Զուգահեռաբար իրականացվել են արդյունավետության կառավարման համակարգի կատարելագործմանն ուղղված քայլեր, մասնավորապես ներդրվել և լրամշակվել են աշխատակազմի ինքնագնահատման և գնահատման գործիքներ, ինչպես նաև ձևավորվել են նոր աշխատակիցների ինտեգրման (onboarding) կայուն և համակարգված ընթացակարգեր՝ ապահովելով դրանց արդյունավետ ներառումը համալսարանական միջավայրում:

Կարևոր ուղղություններից էին թվային կարողությունների զարգացումը և հեռաուսուցման գործիքակազմի ընդլայնումը: Այդ նպատակով մշակվել, ձեռք են բերվել և կիրառվել հեռաուսուցման ծրագրեր թվային տարբեր հարթակներում՝

նպաստելով ուսուցման ճկուն ձևաչափերի ներդրմանը և կրթական գործընթացի շարունակականությանը:

Միաժամանակ խթանվել է փորձի փոխանակումը և կազմակերպչական ուսուցումը ինչպես ներհամալսարանական, այնպես էլ արտաքին գործընկերների հետ: Կայացել են ուսուցողական այցեր, և ձևավորվել են փորձի փոխանակման կազմակերպված մեխանիզմներ՝ ուղղված լավագույն փորձի տարածմանը և կառավարման մշակույթի զարգացմանը:

Հաշվետու շրջանում հատուկ ուշադրություն է դարձվել շարունակական կրթության և կրթական ծառայությունների զարգացմանն ու առևտրայնացմանը: Մշակվել և ներդրվել են վերապատրաստման և լրացուցիչ կրթության փաթեթներ թիրախային տարբեր խմբերի համար՝ ներառյալ պետական և մասնավոր հատվածների ներկայացուցիչները, ինչպես նաև ուսանողները: Զարգացվել են կարճաժամկետ կրթական ձևաչափեր, արդիականացվել են պետական կառավարման ոլորտի վերապատրաստումները, ձևավորվել են կորպորատիվ կրթական առաջարկներ և ընդլայնվել են ուսանողների համար նախատեսված լրացուցիչ կրթական հնարավորությունները:

Ուսումնաօժանդակ կազմի աշխատանքի արդյունավետության բարձրացման նպատակով ԵՊՀ ուսումնաօժանդակ համակազմի համար Ուսումնամեթոդական վարչության կողմից իրականացվել են խորհրդատվություններ ուսումնական գործընթացը կարգավորող փաստաթղթերի վերաբերյալ:

2025 թվականին ԵՊՀ շարունակական կրթության կենտրոնը (ՇԿԿ) իրականացրել է բազմաբնույթ կրթական ծրագրեր և միջոցառումներ, որոնց ընդհանուր մասնակիցների թիվը կազմել է շուրջ 900 հոգի: Հաշվետու տարում ՇԿԿ-ի կազմակերպած ծրագրերի շրջանակում ԵՊՀ-ում վերապատրաստում է անցել 183 դասախոս և 191 վարչական աշխատակից:

ՇԿԿ-ն կազմակերպել և համակազմակերպել է երկու միջազգային լրացուցիչ կրթական ծրագիր, որոնց մասնակցել է 20 ուսանող: Անցկացվել են ընդհանուր առմամբ 16 դասընթացներ՝ նախատեսված 292 պետական ծառայողների համար: Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի հետ համատեղ մշակվել և իրականացվել են շարունակական մասնագիտական զարգացման (ՇՄԶ) երկու ծրագիր և մասնագիտական վերապատրաստման մեկ ծրագիր, որոնց մասնակցել է շուրջ 35 հոգի:

«Ազատ ունկնդիր» բաց հարթակի շրջանակում կազմակերպվել են դասախոսություններ, քննարկումներ և գրքերի շնորհանդեսներ, որոնց ընդհանուր մասնակցությունը կազմել է 81 հոգի:

2025 թվականին մեկնարկել է «Հաշտարարություն և կոնֆլիկտների լուծում» թեմայով վեցամսյա, հավաստագիր տրամադրող ծրագիրը, որում ընդգրկված է 14 մասնակից: «Դի-Վի-Վի Ինթերնեյշընալի» հետ համագործակցության շրջանակում ԵՊՀ թվային հարթակում ներդրվել է դասախոսների վերապատրաստման մեկ դասընթաց, ինչպես նաև ԵՊՀ դասախոսների և ուսանողների ներգրավմամբ իրականացվել են Հայաստանի համայնքներում ցկյանս ուսումնառության հիմնախնդիրներին վերաբերող երկու հետազոտություններ:

Բացի դրանից՝ ՇԿԿ-ն մշակել և փորձարկել է կրթական նոր առաջարկ՝ կազմակերպելով ուսումնական այց ՌԴ Կազանի ճարտարապետական համալսարանի դասախոսների և ուսանողների համար:

Հաշվետու տարում ՇԿԿ-ն էապես բազմազանեցրել է ինչպես կրթական առաջարկը, այնպես էլ ֆինանսավորման աղբյուրները: Տարատեսակ լրացուցիչ կրթական ծրագրերից ստացված եկամուտը նախորդ հաշվետու տարվա համեմատ

կրկնապատկվել է՝ կազմելով 14,885,700 ՀՀ դրամ, իսկ դրամաշնորհային ծրագրերում ներգրավվել է ավելի քան 33 մլն ՀՀ դրամ։

ԵՊՀ անձնակազմի կառավարման բաժնի կողմից կազմակերպվել են ԵՊՀ վարչական անձնակազմի վերապատրաստում՝ «Google Workspace» թեմայով, «Mulberry»-ի կիրառման վերաբերյալ դասընթացներ, իրականացվել է ԵՊՀ վարչական համակազմի ինքնագնահատում, ինչպես նաև ԵՊՀ վարչական աշխատակիցների կարիքների գնահատում։

Հաշվետու ժամանակահատվածում ԵՊՀ ռազմավարական պլանավորման կենտրոնը նախաձեռնել է պլանավորման համակարգողների կարողությունների զարգացման համալիր գործընթաց, ներառյալ՝ կարիքների գնահատում, վերապատրաստում և մասնակիցներից հետադարձ կապի հավաքագրում՝ նպատակ ունենալով որակապես բարելավելու պլանավորման գործընթացը։

Գործընթացի մեկնարկին հաշվի են առնվել նախորդիվ իրականացված գնահատումներն ու վերլուծությունները, որոնք արտացոլում են պլանավորման հետ կապված հիմնական խնդիրներն ու բարելավման կարիքները։ Զուգահեռաբար իրականացվել է պլանավորման համակարգողների առցանց հարցում՝ նպատակ ունենալով ապահովելու վերապատրաստման առավել թիրախային բովանդակություն և համապատասխանեցնելու այն մասնակիցների իրական կարիքներին։

Վերապատրաստմանը մասնակցել են պլանավորման համակարգողները՝ շուրջ 40 աշխատակից։ Ծրագրի շրջանակում քննարկվել են ռազմավարական պլանավորման

դերը և նշանակությունը, նպատակների և հիմնական կատարողական ցուցանիշների (KPI-ների) սահմանման մեթոդաբանությունը, շահառուների քարտեզագրման գործիքները, ներգրավման և հաղորդակցության մարտավարությունները, ինչպես նաև վերահսկման, հաշվետվողականության և տվյալների հավաքագրման մեխանիզմները: Բացի դրանից՝ ներկայացվել և քննարկվել են պլանավորման գործիքների կիրառական օրինակներ:

Հաշվետու ժամանակահատվածում ԵՊՀ եվրոպական ուսումնասիրությունների կենտրոնը, համագործակցելով ՀՀ վարչապետի աշխատակազմի քաղաքացիական ծառայության գրասենյակի, ՀՀ արդարադատության նախարարության «Իրավական կրթության և վերականգնողական ծրագրերի իրականացման կենտրոն» ՊՈԱԿ-ի, ինչպես նաև Եվրոպայի խորհրդի «HELP» ծրագրի հետ, կազմակերպել է վերապատրաստման մի շարք դասընթացներ քաղաքացիական, քրեակատարողական և պրոբացիայի ծառայողների, ինչպես նաև ոլորտի մասնագետների համար: Դասընթացներին ընդհանուր առմամբ մասնակցել է 130 մասնագետ:

Բացի դրանից՝ կենտրոնը Ռաուլ Վալենբերգ մարդու իրավունքների և մարդասիրական իրավունքի ինստիտուտի հայաստանյան գրասենյակի հետ համատեղ մշակել է «Դատապարտյալների վերասոցիալականացման գործընթացի կազմակերպում» և «Խոցելի խմբերի իրավունքների պաշտպանություն» մոդուլները, որոնցով արդեն իսկ վերապատրաստվել է երկու խումբ: «Իրավական կրթության և վերականգնողական ծրագրերի իրականացման կենտրոն» ՊՈԱԿ-ը հաստատել և ներդրել է վերոնշյալ մոդուլները՝ որպես պարտադիր վերապատրաստման ծրագիր:

Կենտրոնը շարունակում է մարդու իրավունքներին առնչվող առցանց դասընթացների իրականացումը: Դրանք կազմակերպվում են նաև կենտրոնի կրթական ծրագրով, որի ավարտին մասնակիցները ստանում են Եվրոպայի խորհրդի կողմից տրամադրված

վկայականներ: Հաշվետու ժամանակահատվածում կենտրոնը կազմակերպել է ներպետական համատեքստին ադապտացված «Փախստական և միգրանտ երեխաներ» «HELP» առցանց դասընթացներ, որոնց մասնակցել է 29 մասնագետ:

Հաշվետու ժամանակահատվածում SS կրթական և հետազոտական կենտրոնը կազմակերպել է ֆակուլտետների գրասենյակների աշխատակիցների վերապատրաստում՝ նվիրված «Supervision» և «Registrar» համակարգերի նոր ֆունկցիոնալ հնարավորություններին: Այս ծրագրի շրջանակում մասնակիցները ծանոթացել են համակարգերի արդիական գործառույթներին և դրանց արդյունավետ կիրառմանը:

Հաշվետու ժամանակաշրջանում համալսարանում իրականացվել են բազմաբնույթ վերապատրաստման և կարողությունների զարգացման ծրագրեր՝ ուղղված ուսանողների, դասախոսական և վարչական անձնակազմի մասնագիտական հմտությունների կատարելագործմանը. կազմակերպվել են հոգեբանության մասնագիտացմամբ ուսանողների վերապատրաստումներ խորհրդատվական հմտությունների, մասնագիտական էթիկայի, ինքնասպանության կանխարգելման, կախվածությունների և արտթերապիայի ոլորտներում, ինչպես նաև ԵՊՀ մասնագետների մասնակցությամբ տեղական և միջազգային (BDG, Erasmus+) վերապատրաստումներ, այդ թվում՝ տվյալների վերլուծության և նորարարական ուսուցման ուղղություններով:

Միաժամանակ իրականացվել են օտար լեզուների դասավանդմանն ուղղված միջոցառումներ՝ գերմաներենի ուսուցիչների և դասախոսների համար միջազգային սեմինար-վերապատրաստումներ, աշխատարաններ և «Գերմաներենի օրը Հայաստանում» միջոցառման շրջանակում իրականացված ծրագրեր՝ արհեստական բանականության և դասապրոցեսի կառավարման ժամանակակից մեթոդների ընդգրկմամբ:

ՀՀ-ում Չինաստանի դեսպանության հետ համագործակցության արդյունքում 2024–2025 ուսումնական տարում Չինաստանի բուհերում և հետազոտական կենտրոններում վերապատրաստվել են ԵՊՀ 45 դասախոսներ և վարչական աշխատողներ։ Հաշվետու ժամանակահատվածում Մանկավարժության կրթության և զարգացման կենտրոնն անցկացրել է մանկավարժի հավաստագրման եռամսյա վերապատրաստման դասընթացներ։ Համալսարանի մի շարք ֆակուլտետների ղեկավար և դասախոսական կազմի ներկայացուցիչներ մասնակցել են վերապատրաստումների ՌԴ-ում, Պորտուգալիայում, Լատվիայում։ Միաժամանակ մշակվել և անցկացվել են պետական ծառայողների համար նախատեսված «Բարեվարքություն» կրթական մոդուլով վերապատրաստումներ՝ նպաստելով կառավարման և մասնագիտական կարողությունների համակարգային զարգացմանը։

Ռազմավարական նպատակ 5 - Կառավարման համակարգի արդիականացում, որոշումների կայացման և իրագործման արդյունավետության բարձրացում

Փաստահենք մարդկային ռեսուրսների և ռեսուրսների կառավարման ներդրումը միտված է կառավարման որոշումների համար հիմնավորված և վերլուծական հիմք ձևավորելուն, օրինակ, ծանրաբեռնվածության և վարձատրության համապարփակ վերլուծության միջոցով: Այս մոտեցումը հնարավորություն է տալիս կատարելու ծանրաբեռնվածության և վարձատրության վերլուծություն՝ ապահովելով ռեսուրսների բաշխման և օգտագործման արդյունավետությունը, ինչպես նաև կառավարման որոշումների թափանցիկությունն ու հիմնավորվածությունը:

Միաժամանակ, կարևոր է տվյալների հասանելիության և պահպանման հստակ կանոնների սահմանումը և շտեմարանների միասնական կառավարման համակարգի ներդրումը: Այս նպատակով նախատեսվում է անվտանգային ընթացակարգերի մշակում և կիրառում, ինչպես նաև տվյալների կառավարման միասնական մեխանիզմների ձևավորում, որոնք կապահովեն տեղեկատվության ամբողջականությունը, պաշտպանվածությունը և կիրառելիությունը:

Պլանավորում–մշտադիտարկում և գնահատում ցիկլի վերջնականացման և արդյունքների օգտագործման գործընթացը ներառում է տարեկան համապարփակ պլանավորման հայեցակարգի մշակումը և հաստատումը, համապատասխան գործիքների և ձևաչափերի ներդրումը, ինչպես նաև ֆինանսական և գործունեության մշտադիտարկման գործիքակազմի զարգացումը: Այս համատեքստում կարևոր տեղ է զբաղեցնում պլանավորման կարգի հաստատումը, մշտադիտարկման և գնահատման գործիքակազմի լրամշակումը և արդյունքների օգտագործման կանոնակարգումը, ինչը նպաստում է ծրագրերի և նախաձեռնությունների արդյունավետ իրականացմանը, հաշվետվողականության բարձրացմանը և կառավարման գործընթացների շարունակական բարելավմանը:

Հաշվետու ժամանակահատվածում Գիտական խորհրդի կողմից հաստատվել և ուժի մեջ է մտել ԵՊՀ պրոֆեսորադասախոսական կազմի թափուր պաշտոնը համալրելու և տվյալ պաշտոնի գիտամանկավարժական գործունեության տեսակները սահմանելու մասին կարգը, որով սահմանվում են ԵՊՀ պրոֆեսորադասախոսական կազմի թափուր պաշտոնի համալրման կարգը, պաշտոնի հավակնորդին ներկայացվող պահանջներն ու պրոֆեսորադասախոսական կազմի համար նախատեսվող գիտամանկավարժական գործունեության տեսակները, ինչպես նաև մրցույթի կազմակերպման, անցկացման և արդյունքների հաստատման կարգը:

Այն կարևոր ինստիտուցիոնալ առաջընթաց է՝ ուղղված համալսարանի մարդկային ռեսուրսների կառավարման և ակադեմիական որակի ապահովման բարելավմանը: Կարգի ընդունումը նպաստում է պրոֆեսորադասախոսական կազմի ձևավորման

գործընթացի հստակ կանոնակարգմանը և թափանցիկությանը, ինչը համահունչ է ժամանակակից համալսարանների կառավարման լավագույն փորձին: Այն նվազեցնում է սուբյեկտիվ մոտեցումների հնարավորությունը և խթանում ակադեմիական արդար մրցակցությունը:

Միևնույն ժամանակ, հավակնորդներին ներկայացվող պահանջների հստակեցումը և գիտահետազոտական ու ուսումնամեթոդական գործունեության միավորային գնահատման համակարգի ներդրումը նպաստում են գիտական արդյունքների և դասավանդման որակի չափելիության ու համադրելիության ապահովմանը:

Կարգը միտված է պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական գործունեության շարունակական զարգացման ապահովմանը՝ սահմանելով գիտական, ուսումնամեթոդական և մանկավարժական գործունեության հստակ չափորոշիչներ: Սույն կարգով սահմանված գիտամանկավարժական գործունեության տեսակները համակարգում են դասախոսական կազմի ակադեմիական պարտականությունների շրջանակը՝ ապահովելով կրթական, գիտական և մեթոդական գործունեությունների փոխկապակցված և համադրելի իրականացում:

Բացի դրանից՝ ԳԽ-ն հաստատել է նաև 2024-2025 ուստարվա ընթացքում ԵՊՀ պրոֆեսորադասախոսական կազմի վերապատրաստման և ատեստավորման գործընթացին մասնակցելու համար դիմում ներկայացնելու կարգը և իրականացրել նշված գործողությունները:

2025 թվականի ընթացքում ԵՊՀ-ում վերապատրաստման ծրագրերին մասնակցելու նպատակով դիմում է ներկայացրել ընդհանուր առմամբ 188 դասախոս, որոնցից 183-ը փաստացի ընդգրկվել և մասնակցել են համապատասխան վերապատրաստման ծրագրերին։ Վերջիններիս ներգրավվածությունը վերաբերում է դասախոսական գործունեության առանցքային տարբեր ուղղություններին։

Մասնավորապես, 73 դասախոս մասնակցել է գիտակարգային և մասնագիտական վերապատրաստման ծրագրերի, 113 դասախոս զարգացրել է դասավանդման կարողություններն ու մանկավարժական հմտությունները, 6 դասախոս մասնակցել է գիտական և հետազոտական կարողությունների զարգացմանն ուղղված ծրագրերի, իսկ 108 դասախոս՝ ընդհանրական (փոխանցելի) հմտությունների ձևավորմանը և կատարելագործմանը միտված վերապատրաստումներին։

Վերլուծությունը ցույց է տալիս, որ վերապատրաստման ծրագրերում առավել ակտիվ ներգրավվածություն են ցուցաբերել Եվրոպական լեզուների և հաղորդակցության ֆակուլտետի դասախոսները (35 դասախոս)։ Հաջորդում են Փիլիսոփայության և հոգեբանության (19 դասախոս), Արևելագիտության (18 դասախոս), Աշխարհագրության և երկրաբանության (14 դասախոս), Տնտեսագիտության և կառավարման (14 դասախոս) և Ժուռնալիստիկայի (11 դասախոս) ֆակուլտետները։

Հաշվետու ժամանակահատվածում ԵՊՀ-ում կատարվել են ուսումնական գործընթացի կառավարման թվային գործիքակազմի կատարելագործմանն ուղղված էական աշխատանքներ։ Մասնավորապես՝ դոկտորական կրթության կառավարման համակարգի զարգացում (Supervision). մշակվել և ներդրվել են Դոկտորական կրթության կենտրոնի (ասպիրանտուրայի) տվյալների հավաքագրման և վերլուծության ծրագրային նոր մոդուլներ։ Ապահովվել է դասախոսների և ասպիրանտների գնահատականների մուտքագրման, դիտարկման և վերլուծության հնարավորություն, ինչպես նաև սահմանվել է տիպային ստանդարտ հաշվետվությունների ավտոմատ գեներացման գործառույթը, ինչը նպաստում է դոկտորական կրթության կառավարման գործընթացների համակարգվածության և վերահսկելիության բարձրացմանը։

Հաշվետու ժամանակահատվածում մշակվել և կիրառվում է ԵՊՀ տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմի արտալսարանային գործունեության գնահատման կարգը, որը լրամշակվել է 2024–2025 ուսումնական տարում՝ հաշվի առնելով գործունեության գնահատման արդիական մոտեցումները և արդյունավետության չափելիության պահանջները։

Սույն կարգի դրույթներին համապատասխան՝ հաշվետու ժամանակահատվածում իրականացվել է յուրաքանչյուր դասախոսի արտալսարանային գործունեության արդյունավետության գնահատում՝ հիմնված արտալսարանային գործունեության

արդյունքային ցուցանիշի (KPI) հաշվարկի վրա։ Տվյալ ցուցանիշի կիրառումը հնարավորություն է տվել ապահովելու դասախոսների արտալսարանային գործունեության հստակ, չափելի և օբյեկտիվ գնահատում։

Միաժամանակ, հաշվետու ժամանակահատվածում ԵՊՀ բիզնես ինկուբատորի խմբերից մեկը մշակել և ներդրել է դասախոսների գործունեության արդյունքային ցուցանիշների (KPI) մուտքագրման և հաշվարկման ավտոմատացված էլեկտրոնային համակարգ, որն ապահովել է դասախոսների արտալսարանային գործունեության ցուցանիշների էլեկտրոնային մուտքագրումը և արդյունքային ցուցանիշների ավտոմատ հաշվարկումը՝ բարձրացնելով գնահատման գործընթացի արդյունավետությունն ու թափանցիկությունը։

Արտալսարանային գործունեության գնահատման արդյունքների հիման վրա յուրաքանչյուր դասախոս, իր վաստակած միավորներին համապատասխան, ստացել է դրամական խրախուսում՝ հեռակա ուսուցման ծրագրերից գոյացած եկամուտների հաշվին։

Հաշվետու տարվա ընթացքում մշակվել է Ռազմավարության իրականացման մշտադիտարկման պլանը՝ ներառելով գործողությունների իրականացման գնահատման համար անհրաժեշտ հիմնական տվյալները (քանակական և որակական), դրանց հավաքագրման եղանակները, պարբերականությունը և պատասխանատուներին։ Մշտադիտարկման այս շրջանակը նախատեսված է կիրառել որպես հաշվետվողականության, ինչպես նաև ռազմավարական ճկուն կառավարման գործիք, որի միջոցով հնարավոր կլինի ժամանակին արձագանքել իրականացվող քայլերի դինամիկային։

Այս համատեքստում Ռազմավարական պլանավորման կենտրոնը կատարել է միջազգային փորձի վերլուծություն՝ ուղղված առաջատար համալսարաններում գործող պլանավորման համակարգերի ուսումնասիրությանը և դրանց համադրմանը ԵՊՀ աշխատանքի առանձնահատկությունների հետ։ Ուսումնասիրությունը հիմնվել է համաշխարհային լավագույն փորձի, համատեքստային համեմատության և տեղայնացման մեթոդաբանության վրա։ Դիտարկվել են մի շարք հիմնարար մոտեցումներ (մասնակցային պլանավորում, տվյալահենություն, հաշվետվողականություն, հետադարձ կապ և այլն)։ Վերլուծության եզրափակիչ հատվածում կատարվել է համեմատություն՝ գնահատելով ԵՊՀ գործող պլանավորման համակարգի համապատասխանությունը միջազգային լավագույն պրակտիկաներին։

Միջազգային փորձի վերլուծությամբ և գործընկերների հետ համագործակցությամբ ՌՊԿ-ն մշակել է ԵՊՀ տարեկան գործունեության պլանավորման կարգը։ Վերջինիս նպատակն է ապահովել ստորաբաժանումների կողմից ԵՊՀ զարգացման ռազմավարական ծրագրին համահունչ, տվյալների վրա հիմնված և մասնակցային պլանավորում՝ խթանելով գործունեության թափանցիկությունը,

հաշվետվողականությունը և շարունակական բարելավումը։ Կարգին զուգահեռ՝ ԵՊՀ ռեկտորի հրամանով հաստատվել են պլանավորման մեջ ներգրավված ստորաբաժանումների ցանկը և վերջիններիս պլանավորման համակարգողները, ինչպես նաև 2025 թ. հոկտեմբերից 2026 թ. դեկտեմբերը ԵՊՀ տարեկան գործունեության պլանավորման կազմակերպման ժամանակացույցը։

Հաշվետու ժամանակահատվածում ԵՊՀ-ում կիրառվել է մասնակցային ֆինանսական պլանավորման մեխանիզմը, որի շրջանակում համալսարանի կառուցվածքային ստորաբաժանումները ներգրավվել են ֆինանսական պլանավորման գործընթացում։ Նշված մոտեցումը հնարավորություն է տվել ապահովելու ֆինանսական որոշումների կայացման առավել ընդգրկուն և հիմնավորված գործընթաց՝ խթանելով թափանցիկությունը, պատասխանատվության բաշխումը և ֆինանսական ռեսուրսների նպատակային ու արդյունավետ օգտագործումը։ Գործընթացն առավել արդյունավետ դարձնելու նպատակով մշակվել և ներդրվել է ստորաբաժանումներին մասնակցային պլանավորման համար հատկացվող ֆինանսավորման հաշվարկի բանաձև՝ հիմնված աշխատակազմի, ուսանողների, կրթական և գիտահետազոտական ծրագրերի, ինչպես նաև այլ չափանիշների համադրման վրա։

Ռազմավարական նպատակ 6 - Արտաքին միջավայրի հետ ինտեգրում և ներդաշնակեցում

ԵՊՀ զարգացման առաջնահերթ ուղղություններից է պետության և աշխատաշուկայի հետ համակարգված գործընկերության խորացումը՝ քաղաքականությունների համատեղ քննարկման, գիտելիքի փոխանցման ինստիտուցիոնալ մեխանիզմների ձևավորման և գործատուների ու աշխատաշուկայի գործընկերների ցանցի ընդլայնման միջոցով: Միաժամանակ, համալսարանի զարգացման առաջնահերթություններից է միջազգայնացման գործընթացի համակարգված առաջխաղացումը՝ ներառելով միջազգայնացման քաղաքականության ձևակերպումը, գործընկերների առուդիտն ու դասակարգումը, միջազգային համագործակցության ծրագրերի իրականացումը և ԵՊՀ դիրքի ամրապնդումը միջազգային վարկանիշային համակարգերում:

Զարգացման առաջնահերթ ուղղություններից է նաև համալսարանի համայնքային կապիտալի զարգացումը, որը ներառում է շրջանավարտների տվյալների կառավարման և ներգրավման մեխանիզմների ներդրումը, շրջանավարտների համայնքի ինստիտուցիոնալ ամրապնդումը, ինչպես նաև «ԵՊՀ բարեկամներ» նախաձեռնության և անձեռնմխելի կապիտալով հիմնադրամի ձևավորումն ու զարգացումը: Միևնույն ժամանակ, առաջնահերթություն է դիտարկվում ռազմավարական հաղորդակցության և տեսանելիության ուժեղացումը՝ արտաքին և ներքին հաղորդակցական պլանի մշակման, կոնտակտների միասնական բազայի ստեղծման, լրատվամիջոցների հետ համագործակցությամբ տեղեկատվական նախագծերի իրականացման, համալսարանի կայքէջի և սոցիալական հարթակների տեսանելիության բարձրացման, ինչպես նաև ներքին հաղորդակցության համակարգի կատարելագործման միջոցով:

ԵՊՀ զարգացման առաջնահերթ ուղղություններից է նաև սոցիալական պատասխանատվության և ներառական աջակցության քաղաքականության իրականացումը՝ թիրախային ծրագրերի միջոցով աջակցելու սոցիալապես խոցելի խմբերին, այդ թվում՝ Արցախից բռնի տեղահանված անձանց, և ընդլայնելու համալսարանական համայնքի սոցիալական հնարավորություններն ու սոցիալական արտոնությունների համակարգը:

Հաշվետու ժամանակահատվածում ևս ԵՊՀ-ն շարունակել է իրականացրել քայլեր՝ ուղղված Արցախից բռնի տեղահանված ուսանողների կրթության շարունակականության ապահովմանը: Հաշվի առնելով պատերազմի հետևանքով ստեղծված սոցիալական ծանր պայմանները՝ ԵՊՀ-ն դիմել է մի շարք կազմակերպությունների, բարերարների, ընկերությունների՝ նպատակ ունենալով վերջիններիս աջակցությամբ ապահովելու արցախցի ուսանողների անխոչընդոտ ուսումնառությունը համալսարանում: Շնորհիվ այս նախաձեռնությունների՝ հնարավոր է եղել 100%-ով ապահովել բոլոր ուսանողների ուսման վարձավճարները:

Մասնավորապես՝ համագործակցության հուշագիր է ստորագրվել ԵՊՀ-ի և Հայաստանի բանկերի միության միջև, որի շրջանակում ձեռք բերված պայմանավորվածության արդյունքում Հայաստանի բանկերի միության անդամ և ՀՀ գործող բոլոր 18 առևտրային բանկերի համամասնորեն ցուցաբերված աջակցության արդյունքում շուրջ 35 մլն ՀՀ դրամ է ուղղվել մասնավորապես «Տնտեսագիտություն և կառավարում» և «Իրավագիտություն» ֆակուլտետների 264 ուսանողի ուսման վարձավճարի փոխհատուցմանը:

Երևանի պետական համալսարանն այս տարի նույնպես իր բոլոր հիմնական աշխատակիցների համար ձեռք է բերել առողջապահական ապահովագրության փաթեթ:

Հաշվետու ժամանակատվածում համալսարանական համայնքի զարգացման և կորպորատիվ մշակույթի զարգացման նպատակով Անձնակազմի կառավարման բաժնի կողմից կազմակերպվել են սոցիալ-մշակութային և ճանաչողական միջոցառումներ՝ ուղղված ԵՊՀ աշխատակիցների ներգրավվածության, սոցիալական կապերի ամրապնդման և կազմակերպական մշակույթի զարգացմանը: Մասնավորապես՝ կազմակերպվել են միջոցառումներ՝ նվիրված Սեպտեմբերի 1-ին, Ամանորին, Մարտի 8-ին և Ապրիլի 7-ին:

Բացի տոնական միջոցառումներից՝ իրականացվել են նաև մշակութային բնույթի այցելություններ Մատենադարան, Հայաստանի պատմության թանգարան, ինչպես նաև Գրականության և արվեստի թանգարան, որոնք նպաստել են աշխատակիցների մշակութային իրազեկվածության բարձրացմանը և ազգային մշակութային ժառանգության ճանաչմանը:

Հաշվետու տարվա ընթացքում ԵՊՀ Շառլ Ազնավուրի անվան մշակույթի կենտրոնը իրականացրել է բազմաբնույթ մշակութային և ճանաչողական միջոցառումներ՝ ուղղված ուսանողների և աշխատակիցների մշակութային կրթության, ժամանցի կազմակերպման և համալսարանականների անձնական աճի համար հավելյալ հնարավորությունների ստեղծմանը:

Իրականացվել են մշակութային ճանաչողական արշավներ դեպի Սանահինի և Հաղպատի վանական համալիրներ, որոնց ընթացքում ուսանողները հնարավորություն են ունեցել ծանոթանալու հայկական միջնադարյան մշակութային և հոգևոր ժառանգությանը: Սուրբ Սարգսի տոնին նվիրված միջոցառման շրջանակում կազմակերպվել է համերգային և մրցութային ծրագիր: Միջոցառման մեկնարկը ազդարարել է ԵՊՀ Շառլ Ազնավուրի անվան մշակույթի կենտրոնի «YSU Band»-ը:

«Մշակութային դաստիարակություն» ծրագրի շրջանակում կազմակերպվել են թատերական այցեր Երևանի պետական կամերային թատրոն՝ դիտելու «Սասունցի David Copperfield» կատակերգությունը, ինչպես նաև Երևանի Հ. Ղափլանյանի անվան դրամատիկական թատրոն՝ դիտելու «Համլետ» և «Չուչել» ներկայացումները։

ԵՊՀ Շառլ Ազնավուրի անվան մշակույթի կենտրոնի աշխատակազմը, երգչախումբը և աղջիկների պարային համույթը այցելել են Վրաստան՝ մասնակցելու Սայաթ-Նովային նվիրված «Վարդատոն» փառատոնի 111-րդ հոբելյանին։ Միջոցառումը տեղի է ունեցել Թբիլիսիում՝ Վիրահայերի միության և Թբիլիսիի քաղաքապետարանի հետ համատեղ։

ԵՊՀ արհեստակցական կազմակերպության և Շառլ Ազնավուրի անվան մշակույթի կենտրոնի համատեղ նախաձեռնությամբ կազմակերպվել է միջոցառում՝ նվիրված Երեխաների իրավունքների պաշտպանության օրվան։

ԵՊՀ պրոֆ. Լ. Ղարիբջանյանի անվան պատմության թանգարանը կրթական ստորաբաժանումների հետ համատեղ կազմակերպել է կրթական միջոցառումներ՝ նվիրված ուշխորհրդային Հայաստանի հասարակական-քաղաքական և մշակութային գործընթացներին։ Ընդհանուր առմամբ անցկացվել է **6 միջոցառում**, որոնց մասնակցել է **174 մարդ**։

ԵՊՀ պատմության թանգարանը հաշվետու ժամանակահատվածում կազմակերպվել է նաև «Ուսանողների դերը ուշխորհրդային Հայաստանի լիբերալ մշակույթում» խորագրով ցուցադրություն, որն անդրադարձել է 1960–1980-ական թվականներին Խորհրդային Հայաստանի երիտասարդության ազդեցությանը հասարակական, քաղաքական և մշակութային գործընթացների վրա: Ցուցադրության բացմանը մասնակցել է **67 մարդ**:

Միջոցառումներին մասնակցել են ԵՊՀ տարբեր ստորաբաժանումների աշխատակիցներ, ուսանողներ, ինչպես նաև ՀՀ գիտահետազոտական ինստիտուտների ներկայացուցիչներ:

Շրջանավարտների և կարիերայի կենտրոնը իրականացրել է բազմաբնույթ ծրագրեր, նախագծեր և միջոցառումներ՝ ուղղված ուսանողների և շրջանավարտների մասնագիտական կողմնորոշմանը, աշխատաշուկայի հետ կապերի ամրապնդմանը և համալսարան–գործատու համագործակցության խորացմանը: Նշված ժամանակահատվածում կազմակերպվել են շուրջ 40 դասընթացներ, իրազեկման հանդիպումներ և շրջայցեր՝ ավելի քան 32 գործընկեր կազմակերպությունների մասնակցությամբ, որոնց ընթացքում ներկայացվել են մասնագիտական ծառայություններ, պրակտիկայի հնարավորություններ, ծրագրեր և թափուր հաստիքներ:

Կազմակերպվել են նաև արտադրական և կազմակերպական շրջայցեր՝ շուրջ 50 ուսանողների մասնակցությամբ, որոնց ընթացքում ուսանողները հնարավորություն

են ստացել տեղում ծանոթանալու տարբեր ընկերությունների գործունեությանը և աշխատանքային միջավայրին: Միաժամանակ, կենտրոնը համակարգել է գործընկեր կազմակերպությունների կողմից առաջարկվող հնարավորությունների շրջանառությունը. պաշտոնական կայքէջում հրապարակվել է 506 թափուր հաստիք, որոնց միջոցով գործընկերներին փոխանցվել է շուրջ 2670 ինքնակենսագրական:

Հաշվետու ժամանակահատվածում գործընկեր կազմակերպությունների աջակցությամբ շուրջ 197 ուսանող ստացել է կրթաթոշակներ, ուսման վարձավճարի մասնակի փոխհատուցում կամ արտերկրում ուսումը շարունակելու հնարավորություն: Բացի դրանից՝ կենտրոնը կազմակերպել և համակարգել է մի շարք խոշոր միջոցառումներ և էքսպոներ, այդ թվում՝ «Սովորի՛ր և վաստակի՛ր. Արցախ» կարիերայի տոնավաճառների շարքը, ինչպես նաև թեմատիկ հեքեթոններ և մասնագիտական ճամբարներ, որոնք ապահովել են ուսանողների լայն ներգրավում և գործատուների հետ անմիջական շփում:

Առանձին կարևորություն է տրվել շրջանավարտների համայնքի զարգացմանը: 2025 թ. մայիսին առաջին անգամ կազմակերպվել է ԵՊՀ շրջանավարտների ֆորումը՝ շուրջ 700 շրջանավարտների մասնակցությամբ, որը ծառայել է որպես հաղորդակցության, փորձի փոխանակման և համագործակցության հարթակ: Միաժամանակ շարունակվել է «ԵՊՀ բարեկամներ» հիմնադրամի գործունեությունը ԱՄՆ-ում կազմակերպված միջոցառումների, պանելային քննարկումների և համայնքային հանդիպումների միջոցով, որոնք նպաստել են համալսարանի միջազգային ճանաչելիության բարձրացմանը և շրջանավարտների ներգրավման ընդլայնմանը: Ներկայում հիմնադրամի գործունեության մեջ ընդգրկված են ԱՄՆ-ում բնակվող շուրջ 200 համայնքային առաջնորդներ և ԵՊՀ շրջանավարտներ:

Կենտրոնը նախաձեռնել է նաև «Կրթություն և կարիերա» ուսանողական նախաձեռնությունների մրցույթը, որի արդյունքում ֆինանսավորվել են 3 ծրագրեր՝ ուղղված կրթության, գիտության և տեխնոլոգիաների ոլորտներում գործնական հմտությունների զարգացմանը: Նշված նախաձեռնությունները նպաստել են ուսանողների տեսական գիտելիքների կիրառմանը, նորարարական մտածողության ձևավորմանը և աշխատաշուկայի պահանջներին համապատասխան կարողությունների զարգացմանը:

Վերջին հաշվետու տվյալների համաձայն՝ ԵՊՀ շրջանավարտների ցանցում գրանցված է ավելի քան 2800 շրջանավարտ, ինչը վկայում է համայնքի աստիճանական ինստիտուցիոնալացման և կայուն զարգացման մասին:

«QS» վարկանիշավորման աղյուսակի 2025 թ. տվյալներով Երևանի պետական համալսարանը շարունակում է լինել լավագույնների ցանկում ընդգրկված հայաստանյան միակ բուհը: Մասնավորապես՝ «QS World University Rankings»-ում ԵՊՀ-ն զբաղեցնում է 901-րդ տեղը, «QS Europe University Rankings»-ում՝ 412-րդ, իսկ «QS Europe University Rankings Western Asia»-ում՝ 22-րդ հորիզոնականը: Ըստ «QS WUR Ranking by Subject»-ի՝ առանձին բնագավառների վարկանիշավորմամբ ԵՊՀ-ն ֆիզիկայի և աստղաֆիզիկայի բնագավառներում 601-620-րդ տեղում է:

ԵՊՀ-ն շարունակել է մնալ նաև «Times Higher Education»-ի կողմից վարկանիշավորված աշխարհի լավագույն համալսարանների ցանկում: Ըստ «Times Higher Education»-ի՝ ԵՊՀ-ն աշխարհում 1501+ հորիզոնականում է, ֆիզիկայի բնագավառում՝ 1001+, իսկ միջգիտակարգային վարկանիշավորմամբ՝ 601+ տեղում («2025 Times Higher Education Interdisciplinary Science Rankings in association with Schmidt Science Fellows»):

2024–2025 ուսումնական տարում ԵՊՀ մարքեթինգի բաժինը շարունակել է իր հիմնական առաքելությունը՝ ուղղված Երևանի պետական համալսարանի բրենդի ճանաչելիության բարձրացմանը, հանրային իրազեկվածության ընդլայնմանը և համալսարանի գործունեության համակարգված հանրահռչակմանը: Տարվա ընթացքում իրականացվել են նպատակային հաղորդակցական նախաձեռնություններ, որոնք ապահովել են համալսարանի գիտակրթական ծրագրերի, միջազգային համագործակցությունների, ուսանողական և ակադեմիական հաջողությունների բազմալեզու (հայերեն, ռուսերեն, անգլերեն) և բազմաալիքային ներկայացումը:

Հաշվետու ժամանակահատվածում ԵՊՀ բոլոր ստորաբաժանումներից ստացվել է շուրջ 240 իրազեկման հայտ, որոնց հիման վրա կազմակերպվել են լուսաբանման աշխատանքներ՝ ներառյալ տեսա- և լուսանկարահանում, տեսանյութերի մոնտաժ և իրադարձային նյութերի պատրաստում: Բովանդակությունը հրապարակվել է կայքէջում և սոցիալական մեդիայում, իսկ բոլոր նյութերը համակարգված կերպով արխիվացվել են:

Կայքէջի վիճակագրության վերլուծությունը ցույց է տալիս, որ գործողությունների թիվը աճել է **17.9%**-ով, ինչը փաստում է օգտատերերի ավելի ակտիվ ներգրավվածությունը՝ էջերի դիտումներից և սեղմումներից մինչև ներքին նավիգացիա: Աշխարհագրության վերլուծությունը ևս ցույց է տալիս ինչպես տեղական լսարանի աճ (Հայաստան +77.8%), այնպես էլ միջազգային հետաքրքրության ընդլայնում:



ԵՊՀ կայքէջի վիճակագրություն, 2024-2025 ուստարի

Համաձայն կայքէջի վիճակագրության՝ նոր օգտատերերի հիմնական այցելությունները (մոտավորապես՝ 480 հազար) ապահովում են որոնողական համակարգերը:



Կայքէջի օգտատերերի վարքագծի ուսումնասիրությունն ու համակողմանի վերլուծությունը ցույց են տալիս, որ հաշվետու ժամանակաշրջանում կայքէջը գրանցել է շուրջ 743 հազար նոր այցելություն, իսկ վերադարձած օգտատերերի թիվը կազմել է 202 հազար: Նկատվող դինամիկան թույլ է տալիս արձանագրել, որ կայքէջը կարողացել է միաժամանակ ներգրավել նոր լայն լսարան և ձևավորել կայուն լսարան:

ԵՊՀ կայքէջի վիճակագրություն, 2024-2025 ուստարի

Այցելությունների տատանումների ընթացքում արձանագրվող պիկերը մեծապես պայմանավորված են ընդունելության գործընթացների հետ կապված որոնողական ակտիվությամբ: Նշված ժամանակահատվածներում որոնողական հարցումների կտրուկ աճը հանգեցնում է կայքի այցելությունների համաժամանակյա բարձրացմանը, ինչը ևս մեկ անգամ հաստատում է, որ կայքէջը հանդիսանում է կրթական գործընթացի կարևոր փուլերին վերաբերող տեղեկատվության առաջնային աղբյուր:

Էջադիտումների (Page view: 5.4 մլն, +14.3%) և օգտատերերի ներգրավվածության (User engagement: 4.2 մլն, +14.9%) աճը ցույց է տալիս, որ այցելուները ոչ միայն կրկնորդում են մուտքերը, այլև ավելի ակտիվորեն փոխազդում են կայքէջի կառուցվածքային բաղադրիչների հետ՝ անցում կատարելով տարբեր բաժիններով և ավելի երկար մնալով կայքէջում: Սքրոլի աճը (Scroll: 793 հազար, +11.4%) վկայում է, որ

բովանդակությունը ոչ միայն դիտվում, այլև խորությամբ ընթերցվում է, ինչն ավելացնում է անհատական նյութերի ազդեցությունն ու արժեքը: Նման դրական դինամիկան պայմանավորված է ոչ միայն տեղեկատվական հոսքերի ընդլայնումով, այլև բովանդակության որակի և ծավալի աճով հաշվետու ժամանակաշրջանում:

Այս միտումների արդյունքում աճել է ինչպես կայքէջ վերադառնալու հաճախականությունը (Session start: 1.8 մլն, +16.6%), այնպես էլ կայքէջում իրականացվող գործողությունների ծավալը: Սեղմումների աճը (Click: 1.3 մլն, +37.8%) վկայում է, որ օգտատերերը արդյունավետորեն կողմնորոշվում են կայքէջում և արագ գտնում անհրաժեշտ տեղեկությունը, ինչը բարելավում է օգտագործելիության մակարդակը: PDF ֆայլերի ներբեռնումների զգալի աճը (508 հազար, +48.4%) փաստում է, որ կայքէջի փաստաթղթային բովանդակությունը բարձր պահանջարկ ունի, և այն կիրառվում է որպես հուսալի տեղեկատվական աղբյուր:





	Facebook	Instagram	LinkedIn	YouTube
Հետևորդների քանակ	80.000 (մոտ 3800 նոր հետևորդ)	5418 (մոտ 2000 նոր հետևորդ)	40455 (մոտ 4400 նոր հետևորդ)	5036 (մոտ 437 նոր հետևորդ)
Ընդգրկվածություն	1.397.322	-	323062	74100 (դիտումների քանակ) 3306 ժամ տևողությամբ
Այցելուների քանակ	822.000	-	3800	
Հրապարակումներ	197	169	120	
Սթորիներ (stories, վիդեո)	57	57	-	
Ռիլեր (reels)	51	51	-	
Տեսանյութեր	205	11	30	205

Հաշվետու ժամանակահատվածում ԵՊՀ ֆեյսբուքյան էջը ցուցաբերել է կայուն և համակարգված աճ՝ բոլոր հիմնական ցուցանիշներում արձանագրելով էական առաջընթաց։ Ներգրավվածության, հղումներից կատարված անցումների, էջի այցելությունների և բաժանորդների քանակի ավելացումը փաստում է բովանդակության արդյունավետության և լսարանի հետաքրքրվածության շարունակական բարձրացման մասին։ Ստացված տվյալները վերահաստատում են, որ կիրարկվող հաղորդակցական ռազմավարությունը գործում է բարձր արդյունավետությամբ և նպաստում է էջի տեսանելիության ու հանրային հասանելիության ընդլայնմանը։

ՄԲ-ն հետևողականորեն վերլուծում է բարձր ներգրավվածությամբ հրապարակումները՝ ուսումնասիրելով օգտատերերի վարքագծային միտումները, հիմնական հետաքրքրության թեմաները և ոլորտի զարգացման ուղղությունները։ Այս տեղեկատվական հիմքի վրա ձևավորվող բովանդակությունը հնարավորություն է տալիս նպատակայնորեն ընդլայնելու արդյունավետ հրապարակումների ձևաչափերը՝ ներառելով կարճ տեսանյութեր, ռիլեր և ինֆոգրաֆիկներ։ Միաժամանակ առաջնահերթ է դառնում բովանդակության թիրախավորվածության բարձրացումը և հետադարձ կապի ապահովման մեխանիզմների զարգացումը՝ ապահովելով հաղորդակցություն, որը համահունչ է լսարանի տարբեր խմբերի ակնկալիքներին ու տեղեկատվական պահանջներին։





Հաշվետու ժամանակահատվածում Մարքեթինգի բաժինը կատարել է ԵՊՀ պաշտոնական կայքէջի բովանդակության մշտադիտարկում՝ ապահովելով տեղեկատվության արդիականությունն ու բազմալեզու հասանելիությունը: Նախաձեռնվել է հաղորդակցական պլանավորման կարգի մշակումը, որը նպատակ ունի կանոնակարգելու համալսարանի ներքին և արտաքին հաղորդակցությունը և բարձրացնելու դրա արդյունավետությունը:

Թարմացվել են շահառուների և լրատվամիջոցների կոնտակտային տվյալների բազաները, կազմակերպվել է պաշտոնական նամակագրության համակարգումը, ինչպես նաև սոցիալական մեդիայի միջոցով ստացված հաղորդագրությունների օպերատիվ արձագանքումը: 2024-2025 ուստարում ՄԲ-ն նախաձեռնել և իրականացրել է ԵՊՀ տեղեկագրի պատրաստում, որի համարները ներառում են համալսարանի գլխավոր նորությունները, համագործակցությունները, միջոցառումները և հաջողության պատմություններ, որոնք տեղադրվել են ԵՊՀ կայքէջում:

Հաշվետու ժամանակահատվածում ԵՊՀ-ի կողմից կազմակերպված միջոցառումները՝ «Հնարավորությունների տոնավաճառը», «Շրջանավարտների ֆորում-2025»-ը, «Շրջանավարտներ-2025» ավարտական միջոցառումը և գործընկերների կազմակերպած էքսպոների շրջանակում (ինչպես, օրինակ, «Գիտության շաբաթ-2024») ցուցաբերած ներկայությունը կարևոր դեր են խաղացել համալսարանի հանրային համբավի, ներքին և արտաքին հաղորդակցման զարգացման, ինչպես նաև համագործակցության խթանման հարցերում: Միջոցառումները հնարավորություն են տվել համալսարանին արդյունավետորեն ներկայացնելու իր ձեռքբերումներն ու նորարարական մոտեցումները լայն լսարանի համար, այդ թվում՝ ուսանողներ, շրջանավարտներ, գործընկերներ և հանրություն: Դրանք նպաստել են համալսարանի տեսանելիության բարձրացմանը, ինչպես նաև ապահովել մասնակցության լայն հնարավորություններ ինչպես ֆիզիկապես, այնպես էլ թվային հարթակներում:

Հաշվետու հաջորդ ժամանակահատվածում Երևանի պետական համալսարանը շարունակելու է իր գործունեությունը 2025-2030 թթ. ռազմավարական զարգացման ծրագրով սահմանված նպատակներին համահունչ: Համալսարանն առաջնորդվելու է այն ձեռքբերումներով, որոնք արձանագրվել են նախորդ տարիներին և կարևոր ռեսուրս են կրթական և գիտահետազոտական ուղղությունների շարունակական արդիականացման, միջավայրի բարելավման, համակարգային բարեփոխումների իրականացման, մարդկային կապիտալի զարգացման և արտաքին միջավայրի կարիքներին արդյունավետ կերպով արձագանքելու համար:

Հաշվետու հաջորդ ժամանակահատվածն արդեն իրականացվելու է սկզբունքորեն նոր համատեքստում, որը պայմանավորված է «Բարձրագույն կրթության և գիտության մասին» նոր օրենքով: Օրենքի ընդունումը և դրանից բխող նոր կարգավորումների մշակումն ու ներդրումը համալսարանից պահանջելու են լրացուցիչ նշանակալի ջանքեր ու աշխատանք իր գործունեության համընթաց ներդաշնակեցման տեսանկյունից:

Այս առումով առանցքային առաջնահերթություններն ու մարտահրավերները վերաբերում են՝

- ընդունելության նոր կարգի ներդրմամբ սկզբունքորեն նոր կարգավորումների և ընթացակարգերի մշակմանն ու ադապտացմանը,
- ծրագրային պարտադիր հավատարմագրմամբ պայմանավորված՝ մարդկային և ֆինանսական հավելյալ ռեսուրսների ներդրմանը,
- կրթության կազմակերպման նոր կարգի ներդրմամբ պայմանավորված՝ լրիվ և մասնակի ուսուցման համակարգերի արդյունավետ գործարկմանը,
- գիտության ֆինանսավորման անհրաժեշտ տեմպի պահպանմանը՝ նախորդ ֆինանսավորման ընթացքի արդյունքների ամրագրման և զարգացման համատեքստում,
- կրթության համար նախատեսված բազային ֆինանսավորման հատկացման անհրաժեշտությանը՝ կրթական համակարգում արդիական գործընթացը և երիտասարդ կադրերի արդյունավետ ներգրավումն ապահովելու համատեքստում:

Նշված մարտահրավերներն ու առաջնահերթությունները էականորեն ավելացնում են հաջորդ հաշվետու ժամանակաշրջանում համալսարանի ծանրաբեռնվածությունը: Այս համատեքստում է՛լ ավելի կարևոր են դառնում ինչպես համալսարանի ներսում աշխատանքի արդյունավետ կազմակերպումը, այնպես էլ պետական, մասնավոր և միջազգային գործընկերների հետ համակարգային համագործակցությունը: Համալսարանը, կանխատեսելով նոր օրենքի ընդունմամբ ակնկալվող աշխատածավալի ավելացումը, իր գործունեության նախորդ փուլում փորձել է որոշակիորեն նախապատրաստվել այս մարտահրավերներին: Համալսարանական

համայնքը, զարգացնելով իր ներքին համագործակցային ներուժը, պատրաստակամ է բարեփոխումների այս սկզբունքորեն նոր փուլում ներդնելու այն մայր բուհի և Հայաստանի Հանրապետության գիտակրթական զարգացումն ապահովելու գործում։